

«DROSHAK»  
REVUE MENSUELLE  
Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 4  
AVRIL  
1932  
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳԱՆ

## Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ի Խ Ն Դ Ի Ր Ը

«Այնպէս» ից ստացած մի նամակում, որ ճրատարակում ենք «Դրօշակ»ի ներքոյ համարում, խօսում է Արեւելքից ակնկալուող փրկութեան մասին: Մորհրդային հպատակներն իրենց չարչարանքների վերջը սպասում են բոլշևեկ-ճապոնական ընդհարումից կաժ, առհասարակ, արտաքին բախումից: Պատերազմի ծարաւը համատարած փաստ է խորհրդային աշխարհում: Ե՛ւ ներքին Ռուսաստանից, ե՛ւ Միջերկրից, ե՛ւ Ուկրայինայից ու Կովկասից ստացուող տեղեկութիւնները միաբերան հաստատում են, որ ժողովուրդը ամէն տեղ ապրում է պատերազմի երազով: Պատերազմը թւում է հնարաւոր, մօտ, ցանկալի: Մանտանող որ բոլշևեկի թերթերն ու ճառախօսներն էլ էրենց հերթին անընդհատ կրկնում են, որ դրամատիրական աշխարհը դանակ է սրում եւ տենդագին պատրաստութեան մէջ է ընդդէմ «աշխարհի միակ ընկերվարական պետութեան»:

Դէպքերի ընթացքը թւում է շատ պարզ. արեւելքից թէ արեւմուտքից՝ յարձակում կը լինի Մորհրդ. Միութեան վրա: Մորհրդային իշխանութիւնը հարկադրուած՝ ընդհանուր զօրակոչ կը յայտարարի ու զէնքի սակ կառնէ ժողովրդական լայն դանդաճներ, ստիպւած կը լինի պէնք սալ գիւղացու եւ բանուորի ձեռքը: Եւ այն ժամանակ... ա՛ր, այն ժամանակ դժար կը կռուակէ պատահելիքը. 18 թւականի յիշողութիւնները դեռ թարմ են. արտաքին ճակատը կը դառնայ ներքին ճակատ. զէնքը կուղղւի իշխանութեան դէմ եւ... վերջ կը տրի կարմիր մղձաւանջին:

Ինչպէս ստում են, ծովում խեղդուող օձին էլ կը փարի: Նոյն հոգեբանութիւնն է խօսողը, անտարակոյս, եւ խորհրդային լծի սակ հեծող դժբախտ ժողովուրդների մէջ: Պատերազմ.

բայց արդեօք փրկութիւն է պատերազմը, որքա՞ն ցանկալի է նա, ինչքա՞ն հնարաւոր:

Ընկերային խնդիրները վճռելիս ամենասխալ եղանակը օրինակներով ու նմանութիւններով դեկլամարելն է: Ճիշտ է, որ 1918ին գինւած ոռւս ժողովուրդը արտաքին ճակատը վերածեց ներքին ճակատի եւ ձեռքի զէնքի ուղղեց ցարական միահեծանութեան դէմ, բայց ճիշտ է նաեւ, որ երկու տարի յետոյ, լեհ-ռուսական պատերազմի օրերին, նոյն այդ ժողովուրդը ելաւ պաշտպանելու իր հայրենիքը արտաքին թշնամու դէմ: Միջազգայնական բոլշևեիկները կարողացան հրահրել ոռուս մարդու աղաքանական կիրքը եւ միլիոնաւոր զինւած զիւղացիներ ու բանուորներ ուղղել դէպի լեհաստանի սահմանները: Բնաւ անբնական չի լինի, որ արտաքին նոր յարձակման դէպքում, ոռուս ժողովուրդը, որքան եւ ատելի է բոլշևեիկեան լուծը, հայրենասիրական կրակով բռնւած, նորից կանգնէ խորհրդային իշխանութեան կողքին, մանաւանդ որ վերջինս, ի հարկէ, ճիշդ չի ինայի զանգւածների աղաքանական յարերի վրա խաղալու համար:

Ի՞նչ կարող է լինել նման պատերազմի ելքը: Յաջողութեան դէպքում՝ կոմունիստական բռնատիրութեան ամբապնդում եւ, հետեւաբար, էլ աւելի անտանելի կեանք ժողովրդի համար: Զախորդութեան պարագային՝ մի նոր եւ համատարած քաղաքացիական վերիվայրում, 18 թւականի կրկնութիւնը աւելի անաւոր ձեւերով: Նոր փլուզումներ ներսը, նոր ներխուժումներ դրսից: Նոր արիւնահեղ բախումներ, մասնաւորապէս, թիւրք-հայկական ճակատում: Ո՛ւմ համար է հրապուրիչ նման հեռանկարը:

Այո՛, կան տարրեր, որոնք իրենց յոյսը կապել են նման հնարաւորութիւնների հետ.

պատերազմական բախումներն ու ներքին փրու-  
զումները հաշւի մէջ են, օրինակ, թիւրքական  
համահանրեց դաւեր նիւթող բոլոր բախտա-  
խընդիրներէ համար: 18 թւականի կրկնութիւ-  
նը նրանց աչքին ո՛չ միայն սարսափելի չէ,  
այլ եւ բազմալի է: Հայ ժողովուրդը, որքա՞ն  
եւ զարհուրելի լինի իր կեանքը, այդպիսի հե-  
ռանկարներով չի կարող ոգեկոտել:

Մնաց որ դեռ շատ է խնդրական, հնարա-  
ւոր է արդեօք այսօրայ պայմաններում որեւէ  
բախում արտաքին ճակատում. ո՞վ եւ յանուն  
ինչո՞ք պէտք է պատերազմէ խորհրդ. Միու-  
թեան հետ: Այնտեղ գերադասահատում են նման  
հնարաւորութիւնը, պէտքէր աւելի լուրջ են  
ընդունում բոլշևիկեան աղմուկը պատերազմի  
վտանգի մասին:

Ո՞վ պիտի պատերազմի էնէ խորհրդային  
իշխանութեան դէմ, եւ ինչո՞ք համար: Խորհրդ-  
ային թերթերն ամէն օր ահազանգ են հնչեց-  
նում անգլիական դաւերի, Փրանս-լիս-ոու-  
մանական պատրաստութիւնների, ճապոնական  
մտադրութիւնների եւ ուրիշ բազմաթիւ երեւա-  
պայական սպանալիքների մասին: Այնտեղ  
պէ տք է գիտնան, որ այդպիսի սպանալիք  
գոյութիւն չունի այսօր: Անգլիան աւելի քան  
երբեք խաղաղութիւն է տեսնում: Բրիտանա-  
կան կայսրութիւնը առանց այն էլ սուր տագ-  
սպանել է պարում Իրլանդիայից սկսած մին-  
չեւ Հնդկաստան. ինչո՞ւ պիտի մտածէ նոր  
դժւարութիւնների մասին: Եթէ մի ժամանակ  
անգլիական պահպանողականների շարքերում  
կարող էին լինել տարրեր, որոնց համար  
խորհրդային իշխանութեան բռնի տապալումը  
որոշ գործնական արժէք ներկայացնող հարց  
է, հիա ո՞ր եւս դրանք:

Բայց գուցէ Ֆրանսա՞ն իր դաշնակից Լե-  
հաստանի ու Ռումանիայի հետ ուզում է պա-  
տերազմել խորհրդ. Միութեան հետ: Մի ցնորք  
էլ այս է: Այնտեղ պէտք է աչքի առաջ ունե-  
նան, որ թէ՛ Լեհաստանի եւ թէ՛ Ռումանիայի  
համար եւ, առհասարակ, Ֆինլանդիայից ըս-  
կած մինչեւ Պարսկաստան, խորհրդային սահ-  
մաններէ կողքին պարող բոլոր ժողովուրդների  
համար ոռոտական ամենաընդունելի իշխանու-  
թիւնը համարւում է խորհրդային իշխանու-  
թիւնը: Միայն շնորհիւ խորհրդային իշխա-  
նութեան ստույգութեան Լեհաստանն ապահովեց  
Ռիդայի հռչակագրով, Ռումանիան մարտեց  
Բեսարաբիան, Թիւրքիան ու Պարսկաստանը  
ազատեցին ցարական մզճաւանջից, Ֆինլան-  
դիան ու Մերձբայրեան երկրները դարձան բո-  
լորովին անկախ — ինչո՞ւ այժմ նրանք պիտի  
ջանան վերացնել իրենց այնքա՞ն բարիք տուող  
եւ այսօրայ անձեռնմխելիութիւնն երաշխա-  
ւորող իշխանութիւնը: Անհեթեթութիւն է  
նրանցից այդպիսի քայլ սպասել: Ե՛ւ Լեհաս-  
տանը, Ե՛ւ թիւրքիան, Ե՛ւ հարեան միւս պե-  
տութիւնները միայն մէկ ձգտում ունին —

Ռուսաստանը պահել միշտ թոյլ ու ներքին  
հոգեբով կլանած, ապահովել Ռուսաստանի  
ապագայ կարութիւնն ու, եթէ կարելի է,  
քայքայում՝ անջատելով նրանից Ռկրայի-  
նան, Կովկասը, Թուրքեստանը եւ այլն: Այս-  
քան — այո՛, բայց պատերազմ՝ ներկայ հան-  
գամանքներում — ո՛չ:

Մուս ու չինծու է բոլշևիկ մամուլի հնչեց-  
րած պատերազմական ահազանգը — արեւ-  
մուտքից այսօր պատերազմի որեւէ վտանգ չի  
սպանում խորհրդային իշխանութեան: Բայց,  
գուցէ, արեւելքի՞ց վախ կայ, չին-ճապոնական  
ընդհարումի՞ց, ճապոնիայի ծրագրերներէ՞ց  
Մանջուրիայի ու Հեռուոր Արեւելքի վերա-  
բերմամբ: Այնտեղ պէտք է բժրոնեն նոյնպէս,  
որ, այս պահուս, արեւելքից էլ անմտութիւն  
է պատերազմ սպասելը:

Արեւելքի զէպքերը կարող են զարգանալ  
երկու ուղղութեամբ. կամ ճապոնիան կամ-  
բապնդի Մանջուրիայում եւ մի առ ժամանակ  
կանգ կառնէ, այդ զէպքում ոռու-ճապոնական  
բախումն ոչ մի երաւական ստիժ գոյութիւն  
չի ունենայ, որովհետեւ խորհրդային իշխա-  
նութիւնը վաղո՞ւց արդէն հրաժարւած է Ցա-  
րական Ռուսաստանի ունեցած իրաւունքներից  
Մանջուրիայում: Զեւականօրէն բախումը կը  
մնայ ճապոնիայի եւ Չինաստանի միջեւ. խոր-  
հուրդները ճապոնացիների հետ շատ-շատ վէճ  
կունենան Արեւելեան Չինական երկաթուղու  
տիրապետութեան ու ղեկավարութեան հարցե-  
րի շուրջ: Ճապոնիայի տեղաւորումը Մանջու-  
րիայում, ի հարկէ, հանելի չի լինի բոլշևիկ-  
ների համար, բայց այդ պատճառով նրանք  
զէնքի չեն դիմի:

Կարելի է երեւակայել մի երկրորդ հնա-  
րաւորութիւն. Մանջուրիայում ամբանայուց  
յետոյ, ճապոնիան աչք կը դարձնէ Ե՛ւ ոռու-  
սական Մերձծովեան Երկրի կամ, նոյն իսկ,  
Ամուրեան շրջանի վրա. նոր չէ որ այդ շրջան-  
ները խայծ են ծառայում ճապոն աշխարհա-  
կայների աչքին: Սա արդէն կը լինի պարզ  
մարտահրաւէր: Կը վերցնեն բոլշևիկները  
նետաժ ձեռնոցը: Հաղիւ՞ թէ: Ցարական իշ-  
խանութեան օրով, երբ Ռուսաստանը անհամե-  
մատ աւելի ուժեղ էր, պատերազմը այդքա՞ն  
հեռաւորութեան վրա վերջացաւ փրուզումով:  
Այսօր ուժերի փոխարարբութիւնը աւելի  
աննպաստ է Մոսկուայի համար: Թէ՛ ուղղա-  
ւորման, թէ՛ պարէնի մատակարարման եւ թէ՛  
հաղորդակցութեան միջոցների տեսակէտից  
կարմիր բանակը հաղարաւոր մղոններիով կտրը-  
ւած է յենարաններից, մինչ ճապոնը գրեթէ  
իր հողի վրա է կանգնած: Բոլշևիկները չա-  
փից աւելի իրատես մարդիկ են, որպէսզի այդ-  
պիսի անյոյս արկածախնդրութեան գերիվը  
նետեն: Մերձծովեան Երկրի՞ր, Ամուրեան շր-  
ջա՞ն, նոյն իսկ Անդրբայկա՞լ, է՛հ, թո՛ղ գրա-  
ւեն. ապագայում, երբ խորհրդային իշխանու-  
թիւնը յաղթանակէ եւ ճապոնիայում, նւաճ-

լամ ճերմակները կը վերստանան կորցրած ազատութիւնը:

Կարելի է առանց վարանումի պնդել, որ Լեւոն ճապոնացիք առաջ շարժեն, բոլշեւիկներն ալ յաջէս էլ կը վարեն: Այդպէս չարի՞ն թիւրքիայի նկատմամբ էլ: Իսկ Հեռուոր Արեւելքում հաստատուելուց յետոյ, ճապոնացիք լեհերից ու թիւրքերից էլ աւելի բոլշեւիկասէր կը դառնան եւ կաշխատեն, որ Բալկանց դէպի արեւմուտք խորհրդային իշխանութիւնը մնայ անվթար ու անոսասն: Խորհրդային Ռուսաստանը, աւելի քան որեւէ ուրիշ Ռուսաստան, կը դերապցնէ ճապոնական տիրապետութեան ամրապնդումը հեռուոր Արեւելքում:

Որ կողմից եւ նայենք խնդրին, կարելի է պատերազմի ակնկալութեամբ օրօրել:

Այնտեղի հիմնական սխալը, որ արդիւնք է, անշուշտ, կեանքի անհանդուրժելի պայմաններ, արտաքին ազդակները գերզնահատուածիւնն է: Բոլշեւիկները դիտմամբ չափակացում աւելցնելով են ներկայացնում այդ ազդակները: Այն օրը որ մարդիկ այնտեղ հասկանան թէ «օտարներէն չկայ յոյս», եւ սկսեն մտածել սեփական ուժով ազատելու մասին, այդ օրը բոլշեւիկեան տիրապետութեան համար կը լինի խկապէս «սկիզբն երկանց»: Բոլշեւիկմի անկումը ո՛չ ճապոնիայից կարելի է սպասել, ո՛չ Անգլիայից, ո՛չ էլ, եւս առաւել, Լեհաստաններից ու Ռումանիաներից, այլ միայն եւ միմիայն Խորհրդային Միութեան սահմաններում ապրող ժողովուրդների միահամուռ կամքից ու գործունէութիւնից: Այդ մասին պէտք է մտածեն այնտեղ:

# Գ Ա Ս Պ Ա Ր Յ Ա Կ Ո Ւ Բ Ե Ա Ն

Գասպարը յանկարծմամբ: Բօթը, կայծակի արագութեամբ, շրթն է առնում բերնէ բերան, և բովանդակ թարփող, փոթորկում է:

Մահանից երեք ժամ առաջ նա դեռ դպրոցումն էր, դիրքը ձեռին, տեսչական պաշտօնի գլուխ: Յանկարծ սրտի ցաւ է զգում և տուն դառնում ու պտուկում: Ուժեղ ցաւեր կրծքի վանդակում և շնչառութիւնը ծանրանում է: Մի սրկում, քառորդ ժամ յետոյ, ուժգին դալարում ու ցնցում, և Գասպարը այլ ևս չկայ...

Ո՞վ էր Գասպարը:

Մեջնասակ, մազազաթէ մորթով, խորացած այտերով, խելօք ու մշուստոտ հայկացքով, քառասունեօթը հազիւ բորբած մի տղամարդ:

Ծնել է 1884թ. յունիս 20ին Քարիկի Լիլուայ թաղի համեստ, անշուք և աղքատիկ խրճիթում, բանուոր ծնողների զրկում: Աղքատական եռամեայ կրթութիւնը ստանում է Քարիկի ամերիկեան վարժարանում, այս 1895-96ուս. տարում սկսում է յաճախել (երրորդ րաժանմունքից) Լիլուայի Հայոց Հայկագեան - Թամարեան դպրոցը, ուր պաշտօնավարել են՝ Նիկոլ-Գուման, Ստրիկեան, Իշխան և Մաղիկ Արդութեաններ և ուրիշներ:

1898-99ից սկսում է Հայկագեան դպրոցի ուկե-

ղարը՝ յայտնի մանկավարժ Տիգրան Ռաջմաճեանի տեսչութեամբ: Այդ թւականներն այնտեղ ուսուցչիւններ էին Յովնան և Յորդանոս Գութեաններ, Մարտիրոս Յարութեան, զոկոս. Փաշայան, օր. Փուղինեան, Արշ. Մեհրաբեան, և հետագային նաև Ե. Ֆրանգեան, Մ. Զառաֆեան, օր. Մեծբաբեան:

Գաղափարական ուսուցիչների այս փաղանգի հօգը շնչի տակ Գասպարն անում է զրական իր առաջին քայլերը: Ուսուցիչների ցանկութեամբ և հսկողութեամբ 1899ից սկսած հինգ տարի շարունակ հրատարակում ու խմբագրում է «Կայծ», յետոյ «Փայտակալ» աշակերտական ամսաթերթը: Դպրոցում նա յաջող աշակերտ է լինում և վայելում է ուսուցիչների հովանաւորութիւնը և աշակերտ ընկերների ջերմ համակրանքը:

Բեմի վրա էլ, իբրև յաջողակ սիրող, աշակերտական դասաստութիւններին էլ Գասպարը առաջինն է: Նրա շարադրութիւնը՝ «Ղ. Աղայեանն իբրև մանկավարժ և մանկական դրող», արժանանում է ուշադրութեան և ուղարկւում յօրէկար Ղ. Աղայեանին: «Գասպարը մեր ղեկավարն էր դպրոցական նրատարանից սկսած», ահա՛ իր ընկերների միաբերան վկայութիւնը:

1902-3 ուս. տարում Գասպարն աւարտում է Հայ-



կազման դպրոցի միջնակարգ դասընթացը (Յրդ դասարան) և նոյն թիւն ուսուցչական պաշտօն ստանձնում Սամառով Մահաբադ գիւղի դպրոցում՝ Սամառնի հրաւրով: Գիւղացիք ու Հասարակութեան Համեստ խաւերն արդէն իր տարիքն էին: Երկու տարի է պաշտօնավարում նա Սամաստում, բայց «Գասպար վարձժայկոն»ը երեսուն տարինը շարունակ կարտող ու ակնածանքով է յիշում սամաստցիների կողմից: Սամաստում նա մօտ չիման մէջ է մտնում Հայդուկների և հայ յեղափոխական գործիչների հետ, որոնք երթեւեկում էին Թիւրքահայաստան՝ զինքի, զրականութեան և երկիր խմբեր մտցնելու աշխատանքով:

1905-6 թվերին ընտանեկան պատճառներով Գասպարը, հակառակ սամաստցիների և Սամառնի բուն ցանկութեան, տեղափոխուում է Թաւրիզ, պաշտօնավարում է Հայկազեան-Թամարեան դպրոցում: Թաւրիզում ջերմօրէի փարոսն է կուսակազմի աշխատանքներին: Երբեմն, ամուսնին արձակուրդներին, շրջում է դաստաները՝ պրոպագանդիստի հանգամանքով: 1906 թվին ընկեր Ա. Արֆ հետ այնչիում է Դարազաղ կազմակերպչական գործերով, միևնոյն ժամանակ ի մօտոյ ծանօթանում Դարազաղի զիւղացիութեան և նրա կարիքներին:

1906ին ծայր է տանում պարսկական յեղափոխութիւնը: Այդ թվերին արդէն Թաւրիզ էին Ստեփան Ստեփանեանը (Բայաշան), Իրրև Կ. Կոմիտէի անդամ, հետագայում նաև Յովնան Դաւթեան, Քեռիկ և Դումանն իրենց խմբերով ու նաև Ռոստոմը, յեղափոխութեան մրրկահանք: Այդ օրերին Գասպարը Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէի անդամ է (1907), Քեռիկ, հետագայում նաև Ռոստոմի և Դումանի յեղափոխական շնչի տակ: Միտամանակ ուսուցիչ է դպրոցում, դասերից յետոյ դադարում է պրոպագանդիստ, կաթմակերպչական, մարտական խմբերի և ուսումնասիրող փոխադրութեան գործով, ժողովներով և յարակից խնդիրներով: Մերթ դրերումն է և փողոցների պատնէշների վրա, մերթ խմբադասանք, Իրրև «Առաւօտ» թերթի խմբադասական կազմի անդամ, աշխատակից և սրբադիր: Գուն ու հանդիստ չունի:

Նա մասնակցեց յեղափոխական շարժման Ռոստոմի ու Դումանի յեղափոխական շնչի տակ և մինչև վերջ մնաց շարժման ամենագործուն ուժերից մէկը:

1910-11 թվականներին, երբ ուսական զօրքը տիրել էր Թաւրիզին և համարեա շրոր պատասխանատու ընկերները հեռացել էին Թաւրիզից, Գասպարը մնաց թաղաբում և յամստ ու անվեհեր շարունակեց գործել: միշտ ենթակայ ցարական պրեստանների և լրտեսների հետապնդման: Այդ օրերին էր, որ քաջամարտիկ հայդուկ Պետրոս խանը կախաղան հանեց, Թաւրիզում, ուսանքի ձեռքով:

Գաղազական, Հասարակական և մշակութային կրթական գործունէութեան զուգընթաց նա հող է տանում լրացնելու նաև իր մտաւոր պայաըը՝ նիւթական խիտ անձուկ պատկաններում: Տարիներ շարունակ ինքնաշխատութեամբ սովորում է սուներէն և օգտուում ուս քաղաքական ու ընկերայինական գրականութիւնից: Իր մտաւոր լայն զարգացման շնորհիւ կարողանում է պատասխանատու ու բարձր դիրքերի հասնել կրթական-դպրոցական ապարկզում: 1913ին նա բնութում է Հայկազեան դպրոցի տեսուչ և մինչև 1923թ. բարեխղճօրէն կատարում է այդ պաշտօնը: Հմուտ ու ձեռնադաս դասարան էր միաժամանակ:

Պայտում է համաշխարհային պատերազմը, որի ալիքները հասնում են նաև Թաւրիզ՝ Տաճկական զօրքը փորձում է խուճել Կովկաս և Ատրպատականից: Ատրպատականի Հայութիւնը մատնում է խուճալի և զանգուածօրէն գաղթում Կովկաս, գլխաւորապէս Թիֆլիս և Բազու: Հակոտակ իր կամքի՝ ամենէն վերջը՝ կազ-

թականի ցուպը ձեռնի՝ մեկնում է Բազու և Գասպարը: Այնտեղ նա մի քանի ամիս պաշտօնավարում է բանտրական քնակարանների կարիքներն արձանագրող համարակութեան մէջ և ապա, երբ տաճկական զօրքը քաշում է, առաջին կարաւանի հետ վերադառնում է Թաւրիզ և նորէն անցնում գործի զուլիս:

«Առաւօտ» թերթի արդիւումը՝ (1909-1911) ըսկըսած էր Հրատարակութիւնը Դարազաղը՝ ամառը, ուր Գասպարը «Շէն» ծածկանունով տարիս էր «Բարեկամական խորհուրդների դարազաղցիներին» իր յօդածաշարը: Յետոյ «Դարազաղը» վերանանեց «Այլ»՝ շարթաթերթի, որի խմբագիրն էր Գասպարը: Փոքրիկ ընդհատումներով, «Այլ»ը լոյս տեսաւ մինչև 1923 թիւ սկիզբները, երբ դադարեց կառավարական արդիւլի պատճառով: «Այլ»ում, բացի խմբագրականից՝ Գասպարը դրում էր և յօդածներ՝ «Շէն», «Սարգոն», «Սը-զոն» ծածկանուններով և «Գասպար» ստորագրութեամբ:

«Այլ»ի խմբագրականների և յօդածների մէջ գաւառի կեանքի Հրատարակ խնդիրներ շօշափելուց բացի, Գասպարի գրութիւնները վեր էին լուծում և քաղաքական ու Հասարակական կեանքի երեւոյթները: Ու նաև անխնայաբար պայքար հակառակորդ, մասնաւորապէս Հնչակեան, հասանքերի դէմ: Նա իր անմրկելի հեղանքով ու կուտ արամբանութեամբ ուղղակի սպանում էր հակառակորդին: Յայտնի են, մասնաւորապէս, նրա «Սը-զոն» ստորագրութեամբ «Վիրակնօրեայ տոմսերը», իսկ «Առաւօտ»ի մէջ «Մեր աշխատակրական քաղաքականութիւնը» յօդածաշարը՝ «Շէն» ծածկանունով:

Վրա են հասնում 1917-18 թվերի ահաւոր տառապանք մտայն օրերը: Հեղղը, սով և համաճարակ, Թիւրքական արիւնջաբբու հորդանքի արշաւ, և մահ արիւնեղակ չզօում է Ատրպատականի հայ դադուլի դասը: Օրը օրին սպասում է հայերի դանդաճային ջարդը:

Թաւրիզ հասած տաճկական 12րդ զօրբանակի պետ Ջաղարար Ալի Իհնան փաշան պատանդներ է պահանջում հայերից: Հայքը առաջնորդարարն լցած է բազմութեամբ: Բոլորի հայեացքը ուղղւած է Գասպարին: Ի՞նչ է ելնում նա և յայտարարում, թէ ինքը պատանդ պիտի դնայ և թէ պէտք է գոհարել ամէն ինչ՝ հայ զարմիքը փրկելու համար: Եւ իր խօսքը կատարում է. նա առաջինն էր թիւրքերի կողմից պատանդ անանած Թաւրիզի հայերից:

1918ին երկուքի և տառապանքի միջից ծնւում է Հայաստանի Հանրապետութիւնը: Գասպարն անվերջ երազներ էր հիւսում մի օր իր համայնքը տեսնել Հայաստանի որևէ մասում ամփոփւած: Նրա համար իրականութիւն էր դարձել առասպելական Ճէնիջը, որ հնիշ հարիւր տարիների պայրկտութիւնից յետոյ վերադարձել էր, իր թիւերն արդեւ Հայքինական դաշտերում և մոխիրների միջից վերածնուել...

«Պատարաւ լինենք դէպի Հայքինիք դարձի Համար», ահա՛ յաճախ կրկնւած իր խօսքը:

Ապա, որպէս խորշակահար մի բազմութիւն՝ վրա հասաւ տարադրութիւնը: Գասպարը ջուն ու հանդիսա չունէր: Հայրենիք էր ընդադրուել և նրա բեկորները շլորուել էին դէպի մեր հորիզոնները: Եւ ամէն արժէքների ժխտում այդ օրերին, Գասպարը մնաց բարձր և անքննադատելի: «Գասպարը Ատրպատականի Դաշտակութեան մարմնացումն է», ահա՛ տարագիր ընկերների բազմից կրկնած խօսքը:

1923 թիւն նա մեկնեց Պրազայ՝ աշխարհ տեսնելու և իր մտաւոր պաշարը ճոխացնելու նպատակով: Պրազայում հետեւում էր դիւրանտեսութեան և մանկավարժութեան և անընդհատ կարգում: Բայց Եւրոպայում փակ նա անմասն չմնաց կրուական գործին: Ի

բացակայութեան վիճեանի Շրջ. Ժողովը (1923թ.) նրան ընտրել էր Կենտրոնական Եւրոպայի Մեկուսի Կոմիտէի անդամ:

Եւրոպայում Գասպարը նման էր արևադարձային այն բոյսին, որ փոխադրելով Հիւսիսի ցրտաշունչ երկիրներէ, խորում ու թռչում է օր աւուր: 1924-ի վերջերին նա մեկնեց Փարիզ՝ իրեն պատգամաւոր Հ. Թ. Դ. 10րդ Ընդհ. Ժողովի՝ Ատրպ. Կ. Կոմիտէի կողմից: Անդամ էր Ընդհ. Ժողովի նախագահութեան:

1925թ. վերջարձաւ Պարսկաստան՝ ճամբին Հանդիպելով Եգիպտոս և Սիւրիա: Թաւրիզում ընդունեց մեծ ցոյցերով և ներքեց իր Հին աշխատանքին: 1925-30 թիւը ուսուցիչ էր Ատրպատ. Հայոց Թեմական Կենտրոնական դպրոցում, 1930-ից մինչև մահան օրը տեսուչ նոյն դպրոցի: Տասնեակ տարիների ընթացքում եղել է նախագահ Ատրպատականի թեմի պատգամաւորական ժողովի և անդամ Թեմական Խորհրդի, 1927-29 նախագահ իր Հիմնած Թ. Հ. Կուլտուրական Միութեան: ԳասնՀինգ տարի շարունակ անդամ կամ նախագահ Հ. Թ. Դ. Ատրպատականի Կենտր. Կոմիտէի: Պատուաւոր նախագահ «Հայ Արիների Միութեան»: Երեանմեայ ուսուցիչ և դաստիարակիչ՝ որի բազմաթիւ աշակերտները ջրած են բովանդակ Պարսկաստանում և այլուր:

Իր յատուկ ընջանքի առարկան էին աշխատաւոր բազմութիւնները, որոնց միջովայրում նա իրեն վերածնեած էր դառնում: Աշխատանքն ու կարիքը նրան խորթ չէին: Նա փնջն էլ ծնել էր Համեստ խրճիթում, տարիների շարունակ կրել կարկատած տարատ ու վերնագրեատ, տեսել զրկանք ու նեղութիւն և Հոգին միացել էր աշխատաւոր բազմութիւնների առուսպանքով:

Ընկերովարական էր ոչ միայն դադափարով, այլ և դործով ու կեանքով: Ծնն ու իմք անձանթ էին նրա Հոգուն: Գրպանի Հաշի չգիտէր և մասնաւոր սեփականութեան վրա նայում էր Հեղանքով: Չեղաւ իր կեանքում մէկ բոպէ, որ անձնական Հաճոյքի և կամ Հանգստի մասին մտածէր. Հասարակութիւնն ու Հայ Ժողովուրդն էր իր Հոգսերի և Հաճոյքի առարկան:

Անա՛ թէ ինչու նրա թաղումը կատարեց աննախընթաց չուքով. Թափօրին չէին մասնակցում միայն Հիւանդներն ու անկարները: Աւելի քան 50 մահապղ զուժում էր նրա մահը: Պարսկաստանի աննչան անկիրեններից անգամ վաթսուն Հեռագիրներ ողբում էին Գասպարին: Յուդարկաւորութեան ներկայ էին և օտարներ, որոնք նոյնպէս ճանաչում ու յարգում էին Գասպարին:

Յիչենք այս եղ մի դուպ Գասպարի բանակցութիւններից Ատրպատական: Թուրք յեղափոխականների Հես:

1920թ. նրա Հետ բանակցութեան մէջ են մտնում, մի շարք Հրատապ զաղաքական ինդիւրների տոթիւ, թուրք յեղափոխականները: Մի դադոնի Հանդիպան ընթացքում թուրք ականաւոր յեղափոխականը անդադադառնալով Դաշնակցութեան Հակաթիւրք դործունէութեան՝ դիտում է, որ Դաշնակցութիւնը մեկակ անգոր է նման ծանրակշիւ ու խոշոր դործ գլուխ բերելու: Գասպարն իրեն յատուկ Հեղանակն ժպիտ իրազայնելով ըթի Առակ՝ պատասխանում է.—

«Ես ձեզ, թուրք յեղափոխականներից, չեմ վստահում, որովհետեւ դուք անկեղծութիւն շցուցարիցիք երեք զաղաքական կեանքում: Ինչ վերաբրում է այն բանին, թէ մենք անգոր ենք մեր ուժերով մեր նպատակին Հասնելու, այդ աթիւ թոյլ աւէք, յարգելի՛ պ. Մ.... պատմել ձեզ մի առակ:

«Ճպուրը յերան լանջով քայլելիս տեսնում է մի մրջիւն, որ ծակում էր լեռը և աւաղի չնչին Հատիկներ դուրս բերելով՝ դարում էր անջել մուտքի մօտ:

— Ա՛յ մրջիւն, ի՞նչ ես տնում այս Հակայ յերան դէմ, քո թոյլ ծնօտներով ինչո՞ւ ես այդ աւաղը կրում, — Հարցնում է ճպուրը:

— Լերան միւս կողմը գտնում է իմ եարը, լեռը ծակում եմ եարիս Հասնելու Համար, — պատասխանում է մրջիւնը:

— Ա՛յ անխելք մրջիւն, — յարում է ճպուրը իրն դալով, — դու այդ քո թոյլ ծնօտներով և մրջիւն տեղովդ ուղում ես այս Հակայ լեռը ծակել և Հասնել՝ քո եարի՞ն, չէ՞ որ մինչև քո այնտեղ Հասնելը կամ եարդ կը մեռնի, կամ՝ դու:

— Ոչի՛նչ, պատասխանում է մրջիւնը, գոնէ եարիս ճամբին կը մեռնեմ»:

— Է՛յ վուլա, ափերի՛ն պարոն Գասպար, քալլիմալ (Կեցցե՛ս ոյ. Պասպար, գինաթափ եմ) տանլով՝ թուրքը ջերմօրէն սեղմում է նրա ձեռքը:

Այդ թուրքը գործիչը ներկայ էր Գասպարի թաղման թափօրին և պատմեց այդ դէպքը:

Գասպարը մեռաւ անդաւակ, բայց Հաղարաւոր որբեր թողեց իր յետեւից: Իր իզէայններն ու յոյրերը տարտղնեց Հաղարաւորների Հոգում, եղաւ դադափարի խաչակիր և անմահացաւ:

Երբ ու բանաստեղծութիւն սիրող Գասպարի թարմ չիրմի առաջ կրկնեք ողբացեալ Դ. Վարուժանի խօսքերը.—

«Ո՛ր, ո՛չ. երբե՛ք չվախճանիս պիտի դուն, Զի կապեցիր կեանքդ արեւուն հետ անչէք»:

Ա. Ա.

# ԶԱԿՖԷԴԵՐԱՅԻԱՅԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Մտի ու ցնծութեամբ, մարտ 12ին, բուլեւերները տօնեցին Անդրկովկասեան Դաշնակցութեան, այսպէս կոչած, Զակֆէդէրացիայի գոյութեան տասնամեակը: Անհաշիւ յօգւածներ, ճառեր ու զեկուցում, նշանաբաններ, կանգէս ու ցոյցեր — խորհրդային մարտիկ վարպետ դերմասններ են, զիտեն աղմուկ հանել:

Ամբողջ այդ աղմուկը կարելի է խոսքնել հետեւեալ կէտերի մէջ.

Զակֆէդէրացիան կազմեց Անդրկովկասի ժողովուրդների յօժար կամբով:

Զակֆէդէրացիան վերացրեց Անդրկովկասի ժողովուրդների միջև եղած հակամարտութիւնները:

Զակֆէդէրացիան խաղաղութիւն եւ ազգային հասարակութիւն հաստատեց Անդրկովկասում:

Մասնաւորապէս հայերի համար, Զակֆէդէրացիան վերջնականապէս լուծեց հայկական հարցը:

Տեսնենք առանձին-առանձին՝ որքան հիմնաւոր են այս հաստատիւնները: Վերջին հաշուով՝ ֆոն Էռնեց Անդրկովկասի անկախ հանրապետութիւնների ջնջումը:

Զակֆէդէրացիան կազմեց Անդրկովկասի ժողովուրդների յօժար կամբով — ճիշտ է արդեօք: Այս հարցին պատասխանելն այլեւս դժուար չէ. պատմական փաստերը մէջտեղն են: Փաստեր, որ ո՛չ թէ դաշնակցականները, կամ Բորեանի պէս «ուկրոնիստներ» են արձանագրում, այլ ուղղափառ Օրախելալիլիները, Օրջնիկիձէներն ու Ստալիններն են հաստատում:

Այս հեղինակաւոր պարոնների վկայութեամբ, Վրաստանի խորհրդայնացումից անմիջապէս յետոյ, 1921թ. ապրիլ 9ին, Լենինը հետեւեալ հրամանն է արձակում Մոսկուայից Անդրկովկասի այն ժամանակայ մարզպան Օրջնիկիձէին. «Ստիպալարա պահանջում եմ ստեղծել տնտեսական մէկ մարմին ամբողջ Անդրկովկասի համար»: Հինգ օր անցած, ապրիլ 14ին, Մեանիկեանի ձեռքով, Լենինը Կովկաս է ուղարկում իր պատմական նամակը, որով նոյնպէս կրկնում է Կովկասի ամբողջական միութեան պահանջը:

Այս պահանջներին կովկասեան կոմունիստները, բայց, մանաւաղ, վրայից յամառ դիմադրութիւն են ցոյց տալիս: Նրանք պնդում են խորհրդային Վրաստանի, Ազրբէջանի եւ Հայաստանի անկախ գոյութեան անհրաժեշտութեան վրա, յատուկ խորհրդաժողով են գումարում լուծելու համար անհամայնի վէճերը, և, առհասարակ, գոյութիւն ունեցող վիճելի հարցերը: Յուզումնայինց պաշարի աւարտից է դառնում Ախալքալաքի, Լոռու, Դարբազի խնդիրը և, ընդհանրապէս, բոլոր այն խնդիրները, որոնք անկախութեան շրջանում էլ բախում էին ստալիներում Հայաստանի, Ազրբէջանի ու Վրաստանի միջև:

Մոսկուան տեսներով, որ էր պահանջը չի կատարուում, Կովկաս է ուղարկում Ստալինին: Սա 1921թ. յուլիս 6ին, Վրաստանի Կոմկուսի Քիֆլիսի կազմակերպութիւնների ընդհանուր ժողովում արտասանած ճառով՝ ամենակծու խօսքերով դատապարտում է վրացական, հայկական և ազրբէջանեան ազգայնակա-

նութիւնը, որ խիստ ուժեղացել է վերջին տարիներս անդրկովկասեան հանրապետութիւնների մէջ և արդեւք է լինում միութեան գործին»: Ապա ժողովի է կանչում Կարբիբօի (Կոմունիստական Կուսակցութեան Կովկասեան բիւրօի) ու հանրապետութիւնների Կենտր. Կոմիտէների անդամներին և նրանց առջև դնում է միութեան պահանջը:

Ի՞նչ կարող էին առարկել Կովկասի կոմունիստները: Ստիպում ընդունում են Մոսկուայից բերած բանաձևը, որ նշաւակում էր տեղական ազգային թեզումները և ճառաբարկում Անդրկ. հանրապետութիւնների Կոմկուսների Կենտր. Կոմիտէներին խիստ ներշնչում անել կուսակցութեան բոլոր ներկայացուցիչներին նման (միութեան վերաբերող) հարցերի լուծման ժամանակ մեկնել քաջաւազէս՝ այդ հանրապետութիւնների աշխատարդ զանգւածների պատմական կապի շահերից»:

Մոսկուայի պահանջով միութեան հարցը դրւում է և Բաբուում: 1921 թիւ աշնան, արհեստակցական խորհուրդների համաանդրկովկասեան համագումարում: Բաբուում, իբրև գործնական արտայայտութիւն միութեան պահանջի՝ կազմուում է արհեստակցական միութիւնների Անդրկովկասեան Խորհուրդ: Իսկ զէչ յետոյ, նոյեմբ. 3ին, Կարբիբօն ընդունում է Անդրկովկասեան Դաշնակցութեան ստեղծումը պահանջող մի բանաձև:

Հարցը այսպէս նախապարտաւոր յետոյ, 1921 թիւ դեկտ. 28ին Լենինը հրահանգում է ազգային գործալար Ստալինին. «Ընդունել անդրկովկասեան հանրապետութիւնների դաշնակցութիւնը սկզբունքով քաջարձակապէս ճիշտ և անպայման կերպով ենթակայ իրագործման»: Լենինն առաջարկում է Վրաստանի, Հայաստանի և Ազրբէջանի կենտրոնական կոմիտէներին ամենաարժեք ժամանակում իրագործել այս պահանջը:

Անդրկովկասեան դաշնակցութեան հարցը, ի վերջոյ, ընկնում ու հաստատուում է և Պոլտորկինյի՝ Կոմկուսի քաղաքական բարձրագոյն մարմնի կողմից, Լենինի, Տրոցուսի, Կամենեւի, Մոլոտովի և Ստալինի ղեկներով: Գերագոյն մարմնի տաճ վճիռը Մոսկուայի վերջին խօսքն էր, որի զէչ կարելի չէր առարկել: Անդրկովկասի կոմունիստներին մնում էր մէկ բան — կատարել վերջից եկած հրամանը:

Մակայն, այդպէս չեղաւ: Մոսկուայի վճիռն Անդրկովկասում առաջ բերեց բուռն գոփոխութիւն, որ արտայայտեց տարբեր՝ ձևերով: Ազրբէջանում իշխանութիւնը փաստօրէն ռուս բուլեւերիների ձեռքին էր: Մրանց օգնում էին զեմալական գործակալները, որոնց աշակցութեամբ գրաւեց Բագուս և որոնք նոյնպէս ձգտում էին Կովկասից մէկ միւտար ստեղծելու: Մրանք, ի հարկէ, ամբողջապէս Մոսկուայի կողմն էին: Նարիմանովի. պէս ազգայնական կոմունիստները ջանք չինապեցին պահպանելու համար Ազրբէջանի անկախութիւնը, բայց նրանց ազդեցութիւնը մեծ չէր Բաբուում, ուր թագաւորում էր 11րդ Կամբի Բանակը:

Հայաստանում հայ կոմունիստները թիւը, առհասարակ, աննշան էր. գործերին ընթացք տուող դրօսից

եկած բուլեհիներն էին, որոնք, ի հարկէ, կարևորութիւն չէին տալիս Հայաստանի ուրույն պայմաններին և հաւատարմի գործադրող էին Մոսկուայի արևող հրամանները: Բայց և այնպէս, Հայաստանում էլ դրուանքներ կոմունիստներ, բայց, մանաւանդ, անկուսակցական և սոսաւորականներ, որոնք հաշտ աչքով չէին նայում խորհրդային իշխանութեան կենտրոնացման և ուսուցչական քաղաքականութեան:

Իրական դիմադրութիւն, սակայն, ցոյց տուեց Վրաստանում, վրացի կոմունիստները կողմէց: Այնտեղ իշխանութիւնը դառնում էր Բ. Մէրիանիի, Ս. Գալթարաձէի, Կ. Յինցաձէի, Օկուշուայի տիպի աղաքանական կոմունիստների ձեռքին: Սրանք ուժգնորէն բողոքեցին Վրաստանի անկախութեան ջնջման դէմ՝ համարելով Ֆէդէրացիան «վաղաժամ» և պահանջով ընթացք չառն Մոսկուայի որոշում: Այդ բողոքը մնաց անշարի: Մոսկուայի կարգադրութեամբ, 1922թ. մարտ 12ին, Թիֆլիսում, գումարեց հանրապետական կենտրոնադրութիւնների ընդհանուր ժողով, ուր որոշեց հիմնել «Անդրկովկասի ընկերակարական խորհրդային հանրապետութիւնների դաշնակցային Ժողովին», որպէս կենտրոնական մարմին ունենալով Միութեանական կոորդինատոր: Այս օրը և հաշտում է Չակֆէդէրացիայի հիմնադրութեան:

Մարտ 12ի որոշումը աւելի ևս բորբոքեց կրքերը: Վրացիները յայտարարեցին, թէ նոր կազմւած «Միութիւնը» պարզ խորհրդակցական մի կազմակերպութիւն է, որ պարտադիր ոյժ չունի. Վրաստանը պէտք է մնա անկախ իր անկախութեան բոլոր յատկանիշներով: Նրանց նպատակն էր, ստանալ Օրախելյալիին, «ամբողջով» վրաց ազգի» այն առանձնաշնորհայ դիրքը Անդրկովկասի ժողովուրդների մէջ, որ կարող էր հետեւել Թիֆլիսի պէս մի կարևոր հանդուցային կէտի, կամ Բաթումի պէս մի նաւահանգստի ամբողջապետութիւնների»<sup>\*)</sup>:

Վրաստանի Կոմկուսի Կենտր. Կոմիտէն, մի յատուկ բանաձեւով, 1922թ. սեպտ. 5ին, բողոքեց վերին որոշման դէմ և պահանջեց որ զպահանջներն անկախութեան բոլոր յատկանիշները: Իրենց պահանջը անցկացնելու նպատակով Վրաստանի Կոմկուսն ու կառավարութիւնը Բուրու Մոլիվանիի գլխավորութեամբ մի յատուկ պատգամաւորութիւն ուղարկեցին Մոսկուա, ուր հարցը քննեց Կոմկուսի Կենտրոնի ընդհանուր ժողովում: Այստեղ նորից ու դարձաւ միաձայնութեամբ, հաստատեց «Անդրկովկասեան Ֆէդէրացիայի և Վերջինիս Ռուսաստանի հետ միացնելու ծրագիրը»: Ու միաժամանակ հրահանգեց Անդրկովկասի կոմունիստներին «խանդավառութեամբ իրադարձել այս որոշումը»:

Վրացիները, սակայն, առանձին խանդավառութիւն ցոյց չուէին. շարունակեցին պայքարը և Յինցաձէի ստորագրութեամբ մի բողոք ուղարկեցին Լենինին՝ անկախութեան ջնջման և Օրջոնիկիձէի արարքների դէմ: Պատասխանը եղաւ մի գայրացած հեռագիր Լենինի կողմից. «Չարմացած եմ ուղիղ հեռագրաթերով և Յինցաձէի ստորագրութեամբ ինձ ուղարկած գրու-

թեան անպարկեշտ ոճից: Ես համոզւած էի, որ տարակարծութիւններն արդէն հարթւած են Կենտրոնի այն որոշումով, որ ընդունել է իմ ոչ անմիջական և Մոլիվանու անմիջական մասնակցութեամբ: Այդ պատճառով, վճռականապէս դատապարտում եմ Օրջոնիկիձէի հասցէին ուղղւած հայհուանեցիկ և պնդում եմ, որ վէճը պարկեշտ ու վայելուչ ձևով յանձնել Կենտրոնի քարտուպարութեան, որին փոխանցում եմ և ձեռ ուղիղ հեռագրաթերով ուղարկած գրութիւնը»:

Չօղնեց, փ հարկէ, և քարտուպարութիւնը: Մոսկուայի հրամանը հրաման էր, պէտք էր գործադրել: Եւ գործադրեց: Մարտ 12ի որոշումը դարձաւ օրէնք, առանձին հանրապետութիւնները տարւէ տարի գրկեցին իրենց իրաւունքները և, ի վերջոյ, ստալ եկաւ այսօրւայ Չակֆէդէրացիան — ձեռով պակհեմարն, բովանդակութեամբ՝ ծայրայեղորէն կենտրոնացած:

Այս է որ բուլեհիները անւանում են «ժողովուրդների յօժար կամք»ի արտայայտութիւն: Աւելի խայտառակ կեղծիք կարելի՞ է երևակայել: Չակֆէդէրացիան ամբողջապէս Մոսկուայից պարտադրւած և բռն ուժով ստեղծուած ու պահուող մի կազմակերպութիւն է:

Չակֆէդէրացիան վերացրեց ազգային բոլոր վեներն ու հավանարտօթիւնները — այս է բուլեհիներէ ամենօրեայ պարծենկոտ խօսքը: Իրօ՞ք վերացրեց: Ինչպէ՞ս վերացրեց:

Օրախելյալիին պատմում է, որ Անդրկովկասի խորհրդայնացումից յետոյ, Վրաստանի, Հայաստանի և Ալբերջանի կոմունիստները իրար հետ աղմկայեղ բանակցութիւններ վարեցին սահմանային վէճերն ու բազմաթիւ ուրիշ հարցեր լուծելու համար: «Սահմանագծման հարցերը նեթ կազմեցին խորհրդային Վրաստանի, Հայաստանի և Ալբերջանի պաշտօնական ներկայացուցիչների յարուկ «խորհրդատնոցում», որը ազգային-ուկրնիստները փորձում էին վարել դիւանադիտական խաղերի բովանդակ ծէսով: Ի հարկէ, նրանք չկարողացան յանգիլ հարցի ուղիղ լուծման, և միայն կուսակցական ղեկավար մարմինների միջամտութիւնը վերջ տուց այդ «բախումին», ինչպէս և հետագայ «բախումներին»<sup>\*)</sup>:

Ի՞նչ է նշանակում այս: Նշանակում է, որ խորհրդային իշխանութեան հէնց սկզբից Անդրկովկասի կոմունիստները «բախեցին» իրար հետ և ճիշտ այն հարցերի պատճառով, որոնք խանդարում էին հանրապետութիւնների փոխարարութիւնները և՛ անկախութեան ջրմանում: Անէ է զդաշնակ-մենշեխի-մուսաւաթականներէ» վէճերն անհիմն չէին և արդիւնք էին այնպիսի լուրջ պատճառների, որոնք «բախումներն ստալ բերին և երեք հանրապետութիւնների իշխանութեան գլուխը կանգնած կոմունիստների մէջ»:

Որո՞նք էին այդ պատճառները: Ինչպէս և ստալ, գլխաւոր տեղը բռնում էր սահմանափէճը: Հայ կոմունիստները պահանջում էին Հայաստանին կցել Ախալքալաքն ու Լուրն. վրացիները թող չէին տալիս: Ալբերջանիները պահանջում էին Ալբերջանին միացնել

\*) «Ջարխա Վաստակ», 29 փետր. 1932:

\*) «Ջարխա Վաստակ», 29 փետր. 1932:

Նախիջևանն ու Զանգեզուրը. հայերը զիմացրում էին: Անդին կային Ղարաբաղի, Արխաղախի, Հարաւային Օսետիայի, Աջարիստանի հարցերը. Աբխազիան ձրգտում էր անկախութեան — վրացիները հակառակում էին...

Մահմանային այս խճճած հանգոյցը, ի վերջոյ, լուծւեց:—Ո՛ր: Ախալքալաքը, Ղարաբաղը, Արխազիան և ուրիշ շրջաններ զո՞հ են իրենց վիճակից, հրաժարւե՞լ են իրենց ձգտումներից:— Ո՛ր: Վէճերն ու անհամաձայնութիւնները թիֆլիսի, Երևանի և Բազուի միջև վերացե՞լ են:— Ո՛ր: Ի՞ժգոհութիւնները անգրկովկասցիների մէջ, որ Անգրկովկասը Մոսկուայի կողմից շահագործուած է իբրև նւաճւած գաղութ, վերացւած են:— Ո՛ր: ո՛ր և ո՛ր:

Անգրկովկասի մամուլը լիցուն է փաստերով, որոնք աղաղակում են «մեծապետական չովինիզմի» և «տեղական թեզումների» մասին, մերթ ընդ մերթ պայթում են կրքեր՝ երևան բերելով ճշւած աղբերի բողբոջ — վրն է այդ ամենը, եթէ է ոչ «ազգային վէճն ու հակամարտութիւն»: Հին ղեկավար կոմունիստների երեք գաղութը — բոլոր այդ Միլիանիները, Քաւթարաձանէները, Լուկաչինները, Համբարձուեանները և շատ ուրիշներ արտաքուստ են Անգրկովկասից — ինչու՞ համար, եթէ ոչ «ազգային վէճերի և հակամարտութիւնների»:

Անգրկովկասում տիրում է ազգային լուսիքում, ճիշտ է, բայց ոչ երբեք խաղաղութիւն: Լուս են ամենքը Ձեկայի անձեթեթեթ կղկնաքարի տակ, բայց քանի հիմնական պատճառները վերացւած չեն, չեն կարող վերացւած համարել և «վէճերն ու հակամարտութիւնները»: Չակֆիդէրացիան Մոսկուայի ուժով պարտադրւած մի ցուցանակ է ստակ, որի յետևը շարունակում է եռալ ազգային կրքերի կաթսան: Բանի Ձեկան ամուր է պահում կաթսայի կափարիչը, կը տիրէ «խաղաղութիւն»։ Հենց որ կափարիչը թուլացաւ, անխուսափելիորէն երևան կը դայ այնպիսի արտեղուութիւն, որի հանդէպ կը նստմանն զգալնակ-մենչեկ-մուսալթ»ական շրջանի բոլոր «բախումները:

Ատում են՝ Չակֆիդէրացիան խաղաղութիւն և ազգային հաւասարութիւն հաստատուց Անգրկովկասում:

Պաղատութիւնը արդէն տեսանք: Յայտնի ընդհարումներ ազգերի միջև չեն կարող լինել, բայց զօղարկւած հակառակութիւնները անպակաս են: Միւս կողմից, կոլիւններն ու խողովութիւնները փոխադրուել են քաղաքացիական գետնի վրա: Ազգային բախում չկայ, կան դասակարգային բախումներ: Պաղատութիւնն են այն չլերջացող ընդհարումները իշխանութեան և գիւղացիութեան միջև: Պաղատ էր 1930 թ.ականը, երբ ամէն տեղ ապստամբութիւններ էին պայթում բռնի կոլխոսացումների հետևանքով: Բանի՞ զեղեր ոմբակոծւեցին խորհրդային թիպարներով, քանի՞ հազար մարդ արտուեց Սիբիր ու սառուցեալ երկրներ: յառանի ո՞ր լուսներում մինչև այսօր էլ չկան «բանդիտային» խմբեր, այսինքն՝ պարզ չեկայական բռնութիւններից փախած այնատար փրկացիներ: Ասել թէ Չակֆիդէրացիան խաղաղութիւն բերեց նոյնքան համապատասխան է իրականութեան, որքան այն, թէ՛ խորհրդային իշխանութիւնը հաց ու ապահովութիւն բերեց Ժողովրդին:

Իսկ հասարակութեան մասին—նոյնպէս թող խօսեն փաստերը:

1918 թ.ին, ինչպէս յայտնի է, անգլիական զորավարների ճնշման տակ Ղարաբաղը միացւեց Ազրբէյջանին, թէև այս շրջանը աշխարհագրականորէն և ազգաբնական կազմով անբաժան մասն է Հայաստանի, և քնակչութիւնը Յ յայրորդական համագումարներով պահանջ էր դրել միանալու Հայաստանին: Միւս կողմից, Ախալքալաքը նոյնպէս աշխարհագրականորէն և ազգաբնական վիճակով Հայաստանի մասն է, և Ախալքալաքցի ազգաբնակչութիւնը մէկից աւելի անգամներ ու խիստ որոշ կերպով ուզեցել է միանալ Հայաստանին: Այս երկու շրջանների հարցը առանձնապէս շատ վրդովի է զգալնակ-մենչեկ-մուսալթական» հանրապետութիւնների անգրկովկան: Երբ Անգրկովկասը դարձաւ խորհրդային, Ախալքալաքի ու Ղարաբաղի խնդիրը եկաւ և Հայաստանի, Վրաստանի ու Ազրբէյջանի կոմունիստների առջև: Ի վերջոյ, Ի՞նչ սկզբունքով լուծւեց այդ հարցը — արդարութեան, հասարակութեան: Ինչպէ՞ս չէ: Նորից յաղթանակեց ո՞րք. Ախալքալաքը մնաց Վրաստանի սահմաններում, Ղարաբաղը՝ Ազրբէյջանի:

Աւելի աղաղակող է Ծարուր-Նախիջևանի պարագան. Հայաստանի արտում ստեղծւեց առանձին «հանրապետութիւն» և միացւեց Ազրբէյջանին, որի հետ ընդհանուր սահման անգամ չուէի: Երբ խնդիրը գալիս է Ախալքալաքին, կոմունիստների ստալէն քննում այն միտքը, թէ այդ դասուը հարկաւոր է Վրաստանի անասապահութեան և երկրաբործութեան համար: Ղարաբաղը ճծառայում է իբրև արօտատեղի Մերձկասպեան, սափաստանի վաչկատու և կէսվաչկատու խանարածների համար, ուստի և ծայր աստիճան հարկաւոր է Ազրբէյջանի թուրքերին... Հայերով բնակւած Լեռնային Ղարաբաղի անջատումը Ազրբէյջանից և Հայաստանին միացւելը կարող է խանգարել դարբերով ստեղծւած ստեղծական հասարակչութիւնը»: Հետևաբար, չնայած «Ղարաբաղի ազգային կազմը ըստ փաղանց միապաղպղ է — 95% հայեր են») , այդ շրջանը պէտք է պահել Ազրբէյջանի սահմաններում, թէև ոչ մի դժարութիւն չկար Ղարաբաղը միացնել Հայաստանին, իսկ ջորի համար կիրառել նոյն կարգը ինչ որ ընդունւած է Զանգեզուրի, Նոր-Ֆայազուի, Ղազախի շրջանների արօտատեղիների վերաբերմամբ: Բայց բոլշևիկական «հասարակչութիւն»ը պաղպաղանջում է, որ Ղարաբաղը մնայ ազրբէյջանցիների տիրապետութեան տակ, ինչպէս և Նախիջևանը, որ ոչ միայն «ստեղծեալէս», այլ և աշխարհագրականորէն ու քաղաքականորէն տեղաւորւած է Հայաստանի մէջտեղը:

Եւ ահա «հասարակչութեան» հետևանքը —

- Ազրբէյջանը ունի 85,963 քառ. զիլոմետր տարածութիւն 2,314,571 բնակչիներով, Վրաստանը՝ 70,218 քառ. զիլ. տարածութիւն և 2,678,300 բնակիչ, իսկ Հայաստանը՝ ընդամենը՝ 30,948 քառ. զիլոմետր և 877,870 բնակիչ\*\*): (Բնակչութեան այս և հետագայ թվերը առնուած են վերջին ընդհանուր մարդահամարից.)

\*) Բ. Н. Худяков. «Закавказье», Москва, 1926, стр. 62. (Վ. Ն. Խուդախով, «Անգրկովկաս», Մոսկուա, 1926, էջ 62):

\*\*) André Pierre. «U.R.S.S.», Paris, 1932.



նրանից յետոյ, Հայաստանի բնակիչները քանակը աճել է և, առում են, հասել է մէկ միլիոնի, բայց համապատասխան չափով աճել է և միւս հանրապետութիւնների բնակչութիւնը) :

Ինչպէս յայտնի է, Սորհրդ. Միութեան մէջ շրջանները մասնակցում են պետական ընդհանուր կենսաբեր և երևումաբեր իրենց ունեցած տարածութեան և բնակչութեան քանակի համեմատ: Նոյն սկզբունքը կիրառում է և տնտեսական ու շինարարական ծրարքերի կազմելիս: Նոյն սկզբունքով չափում է և հանրապետութիւնների տեսակարար կշիռը Միութեան մէջ: Այս սկզբունքով Վրաստանի և Ազրբէջանի արժէքը անհամեմատ աւելի բարձր է, քան Հայաստանինը: Վրաստանն ու Ազրբէջանը աւելի շատ են օգուտում միութեանական բերելէից, քան Հայաստանը: Վրաստանը իւրացնում է և Վրաստանում գտնուող հայերին ընկած բաժինը (Ախալքալաքի և ուրիշ շրջանների): Նոյնպէս և Ազրբէջանը՝ իւրացնում է հայերի և Հայաստանի բաժինը (Ղարաբաղ, Նախիջևան, Գանձակ և այլն): Հետևաբար, շուրջ 700,000 հայերի բաժին իւրացնում են Վրաստանն ու Ազրբէջանը, մինչդեռ Հայաստանում վրացի բնու զուգութիւն չունի, իսկ թուրքերի թիւը 10%ից էլ ցած է և, ուրիշն, չի կարող շոշափելն անդադարձում ունենալ Հայաստանի ելումուղի վրա:

Գրութիւնը զգալի չափով կը տարբերէր, եթէ Հայաստանին միացէին Ղարաբաղը, Նախիջևանը և Ախալքալաքը: Այն ժամանակ Հայաստանի վրա կաւեւանար Ղարաբաղը 4,160, քառ. քերովետր տարածութեամբ ու 125,300 բնակիչներով, Նախիջևանը 5,988 քառ. քեր. ու 104,060 բնակիչներով և Ախալքալաքը՝ շուրջ 3000 քառ. քեր. և 80,000 բնակիչներով, որով Հայաստանը կունենար 44,096 քառ. քերովետր տարածութիւն և 1,187,300 բնակիչ: Նորից հայերի մի խոշոր թիւ կը մնար Վրաստանում և Ազրբէջանում, բայց անհնչն աղաղակող անարդարութիւնն ու անհաւասարութիւնը դարձանաւած կը լինէր: Մի անհաւասարութիւն, որ այնպէս ամուր կկրպով ներխաղործել ու պահում է Զակֆէղէացիան:

Ահա բուլեղիկեան հաւասարութեան և մեքերիւ ուրիշ օրինակներ, ոչ պակաս չիւթալից ու պերճախօս:

Անցած տարւանից որոշած է Սորհրդ. Միութեան մէջ մի շարք քաղաքներ անանձնացնել և յատուկ վարկեր սահմանել նրանց շինարարութեան և բարեգործութեան համար: Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը և Ազրբէջանի մայրաքաղաք Բաքուն, որոնց վրա առանց այն էլ խոշոր գումարներ են ծախուում, մտցւած են այդ ցանկի մէջ: Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որ առանց այն էլ զրկւած է ամէն տեսակէտից, մտցւած չէ:

Թիֆլիսն ու Բաքուն և Վրաստանի ու Ազրբէջանի ուրիշ քաղաքներ ո՛չ միայն վրացական ու աղբրբէջանեան բիւզնէից են օգուտում, այլ և խոշոր յատկացումներ են ստանում անդրկողկանեան եւ համամիութեանական հիմնարկութիւնների համար. Անդրկողկանի համամիութեանական բոլոր հիմնարկութիւնները կենտրոնացած են Վրաստանում և Ազրբէջանում. Հայաստանում ոչինչ չկայ, և, հետևաբար, Հայաստանը այս կարգի ոչ մի հասոյթ չունի: Հա-

յաստանում մէկ հիմնարկութիւն միայն կար անդրկողկանեան չափանիշով — Երևանի անասնաբուժական վարժարանը, այն էլ փակեցին և հայկական մասը մտցրին Հայաստանի բիւզնէի մէջ: Թիֆլիսն ու Բաքուն մեծանում և զարգաւում են նաև հայերի աշխատանքով ու դրամներով. Երևանը ո՛չ մի կողմէի չի ստանում Վրաստանից և Ազրբէջանից: Տարիներ առաջ հանդիսաւորապէս խոստում եղաւ Երևանում մի ժողովրդական տուն շինել ի հաշիւ Անդրկողկանի, բայց մինչև այժմ էլ չհնած չէ: Եւ այժմ խայտառակ բաներ են կատարուում այդ ժողովրդական տան շուրջ:

Այսպիսի փաստեր կարելի է բերել շատ շատ, բայց չէ՞ք կարծում, թէ այսքանի էլ բաւական է:

Պակաս աղէտաւոր չեղաւ Զակֆէղէացիան և հայկական հարցի տեսակէտից: «Մինք վերջնականապէս լուծեցինք հայկական հարցը», պարծնում էր Ա. Մեզապիկեանը: «Անդրկողկանեան Ծէղէրացիան ընդմիշտ լուծեց հայկական հարցը», թեթեւամտօրէն կրկնում են այսօրայ հայ բուլլեթիկները: Ինչպէ՞ս լուծեցին:

Լուծեցին ոչ միայն Ախալքալաքը, Ղարաբաղը, Եարուր-Նախիջևանը վրացիներին և ազրբէջանցիներին, յանձնելով, ոչ միայն կարող, Արդասանը, Օլթինը, կաղզւանն ու Սուրբմարուն թիւրքերին թողնելով, այլ և ամբողջ Թիւրքահայաստանից հրաժարելով: Այդ ձևով ո՛վ չէր կարող լուծել հայկական հարցը: Այդպէս չէ՞ին ուզում լուծել և թիւրքերը:

Թիւրքերի նպատակն էլ հէնց այդ էր. Թիւրքահայաստանը բնաջնել կամ աշխարհի շորձ հովերին տալ, Հայաստանը փակել չորս պատերի մէջ Սեւանի շուրջը, Նախիջևանի վրայով կամուրջ ձգել Անգորայի ու Բաղուի միջև, Թիւրքահայաստանը լեցնել մահմետականներով, հայ տարրը ամէն տեղ դարձնել արհամարհելի քանակ—այդ ամենը աւելնով կատարեցին բուլլեթիկները, որպէսզի, ինչպէս վկայում է Օրախիւրաչովիլին, պաշտպանին «գեմալական Թիւրքեան անդրկողկանեան թիւնընում» («Ջարախ Վաստողա», 12 մարտ, 1932): Թիւրքեան բուլլեթիկները համար գէնց էր և է իմպերիալիստների դէմ: Այդ գէնցը իրենց ձեռքին ունենալու համար գոհացին հայերին ու հայկական դատը, ոտքի տակ տին Հայաստանը, պաշտպան հանդիսացան ամենադեհնիկ անարդարութեան, երևան կեան այնպիսի դեբում, որպիսին ցուցադրած չեն նոյն իսկ վատթարագոյն իմպերիալիստները գաղութները նաճման շրջաններում:

Ձեռնելով Հայաստանի անկախութիւնը, Հայաստանը մտցնելով Անդրկողկանեան Դաշնակցութեան մէջ՝ բուլլեթիկները ծանրաբույն հարւած հասցրին Թիւրքահայկական դատին, զրկեցին նրան միջպագային իրաւական հիմքերից և գործնական հարաւորութիւններից: Իրոյրովին այլ կը լինէր դուրթիւնը, եթէ իրաւական ճանաչում ստացած Հայաստանը մնար իբրև անկախ պետութիւն. այն ժամանակ կը գտնուէր մի միջոց Թիւրքահայկական հողերը միացնելու անկախ Հայաստանին: Այժմ Հայաստանը միջպագային իրաւունքի անձ չէ, զոյութիւն չունի որպէս ինքնուրոյն միտւոր. Անդրկողկանի անբաժան մէկ մասնիկն է միայն և ոչ միայն կամք, այլ և ոչ մէկ օրինական հիմք կամ

գործնական հնարաւորութիւն չունի գրադելու թիւրքահայկական հողերով: Ինչպէս խորհրդային իշխանութեան համար առհասարակ, այնպէս և Չակֆէդէրաքիայի համար հայկական հարց, թիւրքահայկական խնդիր, թիւրքահայ ժողովուրդ ու թիւրքահայոց հողեր գոյութիւն չունին: Եւ այս տեսակէտից ճիշտ էր ասում Մեհաձիկեանը. «Հայկական հարցը «բռնաձեռ» է: Եոյն այս վերաբերումով է բացատրուում և այն փաստը, որ իբ հայրենիքից քլւած 700,000 թիւրքահայերը թողնել են հայմարտը. խորհրդային իշխանութիւնը մերժում է նրանց ճանաչել Հայաստանի քաղաքացիներ: Թիւրքիւն էլ չէ ճանաչում, և հայութեան մէջ քառորդը մնացել է կախած օդի մէջ՝ անհայրենիք և քաղաքական ու քաղաքացիական ապականից գուրդ: Այլ էր վիճելը, երբ Հայաստանը անկախ էր. բոլոր հայերը քաղաքացի էին և վայելում էին Հայաստանի քաղաքացիութեան իրաւունքները: Կացութիւնը հիմնովին տարրեր կը լինէր, եթէ Հայաստանը մնար անկախ, թէկուզ, նոյն խել, խորհրդային դժգոյսի տակ: Անկախութեան փաստն ինքնին կը լինէր գորուոր ազգակ թիւրքահայութեան քաղաքական ու քաղաքացիական դատի ապահովութեան և հայկական հարցի լուծման հնարաւորութիւնների համար: Զակֆէդէրաքիան վերաբրցի այդ հնարաւորութիւնները:

Որ կողմից և մտահանք, ինչ անկոնիցու գիտելու լինենք, Զակֆէդէրաքիան մի մտայլ էլ է Հայաստանի ու Հայ ժողովրդի կեանքում: Մենք հասկանում ենք, ի հարկէ, Օրասիւբալվիլիներ կամ Մուսաբէգովիլիքի ցնծութիւնը. նրանց համար Զակֆէդէրաքիան բերեց անվիճելի բարիքներ: Վրացական և ազդեցնեան հարցեր գոյութիւն չունէին Ռուսաստանում, խորհրդային իշխանութիւնը հասունացրեց և ամրապնդեց այդ հարցերը: Իրենց աշխարհաւարական դիրքին քանակ ջատկութիւնների և Պրոչկը. Միութեան մէջ բնեցած մասնակցութեան շնորհիւ Վրաստանն ու Ազերբէյջանը տնտեսական ու շինարարական բազմաթիւ ու

խոշոր ձեւերակներ իրագործեցին միութենական միջնոցներով. մեծամեծ դուժարներ ներգրկեցին վրաց և ազրբէյջանեան տնտեսութեան մէջ: Անկախութիւնից զրկելով էլ Վրաստանը մնաց գերիշխող դերում Անգլոսոցիկառում. Օրասիւբալվիլիներն ու Օրջոնիկիձէնները շարունակում են ճարպիկ ձեռքերով մտակովեան բարիքներն ուղղել դէպի թիւրքիս ու վրացական դաւանները: Հայաստանը այս տեսակէտից էլ զրկւած է:

Համեմատեցնէ խորհրդային իշխանութեան սկզբի շրջանի նշանաբանները այսօրուայ իրականութեան հետ, և պատկերը կը լինի կատարեալ:

Առաջ ընդէկիները խոստանում էին ո՛չ միայն Կարսն ու Մուրմալուն, յետ անեն թիւրքերից, այլ և թիւրքահայկական խնդիրը լուծել: Այժմ և՛ թիւրքահայաստանի, և Կարս ու Մուրմալուի վրա սեւ խաչ է քաշւած:

Մոտանում էին վիճելի դաւանները վերադարձնել Հայաստանին — այժմ ո՛չ միայն Ախալքալաքն ու Ղարաբաղը չբուրլ ու երկար ժամանակով իրւած են Հայաստանից, այլ և Եւրոպիան ու Նախիջևանը:

Մոտանում էին Հայաստանը դուրս բերել մեկուսացումից և դարձնել հաւասար անգրկովկասեան միւս հանրապետութիւնների հետ — այն ինչ Հայաստանի մեկուսացումն ու իրաւազրկումը աւելի և աւելի սաստկանում է: Հայաստանը մի Աբխազիա է այսօր:

Մոտանում էին խաղաղութիւն բերել Անգլոսոցիկառի ժողովուրդներին, ապահովութիւն ու բարեկեցութիւն — ո՛ր է խաղաղութիւնը, ապահովութիւնն ու բարեկեցութիւնը ո՛ր էր են:

Զակֆէդէրաքիայի տասնամեակը բռնութեան, հարստահարութեան, ազգային ճնշումի, սովի ու զրկանքի տասնամեակ է: Իսկ Հայաստանի համար՝ նաև թիւրքահայոց իրաւազրկման և թիւրքահայ դատի մահացում հարածի տասնամեակ: Զակֆէդէրաքիան եղաւ Քէժմալի լաւագոյն դաշնակիցը:

Ս. ՎՐԱՑԱՆ

## ԱՅՍՕՐԻԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՆ

(Ներսից դիտւած)

Պաղատութիւնը այսօր աւելի հեռու է աշխարհից, վաղ աշխարհը խաղաղւելուց, քան որ թւում էր սքանկից ընդամենը դեռ երկու-եքեք տարի առաջ: Այն օրերին «գարնան հովիտ» էին սխլում, Պայտը նրանց փոխարինել են աշնանային քամիները: Եւրոպայի Միացեալ Նահանգների քաղաքաբը, որ սկսել էր տակաւ գործնական կերպարանք առնել, Լետայի շրեթին է յանձնւած ներկայիս: Համա-Եւրոպայի առաքեալներ Շթրեգեման և Բրիկան լուցին յաւիտանս, և նորէն բարձր է հնչում «Եւրոպայի կործանման» չարագուշակ մարգարէների՝ Եպիսկոպոսների ձայնը: Թւում է թէ մէկ աստիճանով դէպի յետ՝ մարդկութիւնը ստը է դրել 1918-1920ի պետի վրա: Երկար տարիներ թափած ջանքերը կարծէք յուս են ցնդել, ու կարելի է պացուում՝ նո՛ր ի նորայ սկսելու ամէն ինչ: Յուսեանները վարել սկսել է բարձրանալ աշխարհի մարգարէները:

Գերմանիան մի փոքրիկ, բարձրաքանդակ պատկե-

ասցումն է այդ դրութեան: Իր աշխարհադրական դիրքով — Եւրոպայի սկրտը —, բայց մանասանը, գինքը յուրով քաղաքական, տնտեսական և աշխարհայեացքի խնդիրներով ու մտահոգութիւններով, որ ե՛ն նաև մեծ մասով, համայն մարդկութեանը: Գերմանիոյ բախտը՝ բախտն է, մի խոշոր շարիով, ամբողջ Եւրոպայի, անգամ՝ ողջ աշխարհի: Գոնէ տեսակեանապէս՝ այդ դիտակցում են մարդիկ Լոնդոնում ու Փարիզում, Նիւ-Եորքում ու Հրոսում: Անա՛ թէ ինչու ամենքի աչքերը այժմ յարած են Բերլին: Մասնատեղ, վերջին ժամանակներս, երբ այս երկիրը կրկին ու կրկին սկսել է հրաբխային զարդիւններ արձակել:

Կացութիւնը աւելի լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է մի ընդհանուր Հայեսաց նետել այս երկրի Անքիւ կեանքի վրա:

Տնտեսական խնդիրները դերակշռող տեղ են զբաղում նրանում: Ենթերին, բայց նաև արտաքին քաղաքականության հարցերը դարձնալ անխզելիորեն կապված են դրոշա հետ:

1924 թվականից մինչև 1929 թ. վերջերը, մոտ վեց տարի, տնտեսական վերելքի մի շրջան էր Գերմանիայի համար: Ճարտարաբանությունը հարգում էր և առաելագործն էներգետիզմը՝ այդ վերելքի ընթացակից երկրայիններն էին: Պատճառ է հետևանք՝ միանգամայն: Ռուսի հաշվարարները և Լոնդոնի համաձայնությունները 1924 թ. մեծապես նպաստեցին դրան:

Յարտուել, ոչ իսկ երկարատև լինել կարող էր, սակայն, գերման տնտեսության բարդաւաճումը: Ոչ միայն նրա համար, որ դրամատարական տնտեսաբանությանը յատուկ հիմնական արտադրութիւն է պատկանում, առհասարակ, վերելքին անխուսափելիորեն և կանոնաւորապէս բարձրող վայրէջքը, այլ և այն պատճառով, որ այս երկրի տնտեսական ուժնացումը յիշեալ տարիներին՝ աւելի շուտ արտաքին ազդակների առաջ ամերիկեան մեծածաւալ փոխառութեանց ու դրամական զետեղումների աղբիւնքն էր, քան՝ ներքին ուժերի ծաւալման արգասիքը:

1929 թ. վերջը և 1930 թ. սկիզբը դարձակէտ եղան գերման տնտեսութեան և քաղաքականութեան համար: Շեքերեկեան իր մահով և Հելմուտ Միլչերի իր հրատարակումով՝ վերջակէտ դրին բարդաւաճման շրջանին: Առատ տարիների հետեւեցին վախ ապրիներ, որ զեւեւա շարունակուր են իրենց կատարեալ ուժի մէջ մնալ: Բրիւննիզեն էր վիճակում՝ թի՛ իրբու վարչապետ եւ թէ՛ — բաւական ժամանակից ի վեր — իրբու արտաքին գործեր նախարար՝ դիւաւորներու կառավարութիւնը և վարչելու այս երկրի ղեկը, անհունօրէն դժնդակ պայմաններում:

Գերմանիայ տնտեսական տաղնապը անբաժանելի է, ի հարկէ, համաշխարհայինից: Վերջինի ժամանակագործին յալորդեց առաջինին եւ մեծ հարած ստացում նրանից: 1930 թ. եւ, մանաւանդ, 1931 թ. տարիները Գերմանիան ամբողջաւն տնտեսական անկման նշանի տակ անցուց: Մի շարք խոչըր եւ, մանաւանդ, դրամատնային ձեռնարկութիւնների փրկողումները՝ մի-մի յայտարար էին դրա: «Դարձույտներ եւ Լացիոնալ Բանկի սնանկութիւնը անցեալ տարի՝ ահաւոր ազդանշանն էր դալիք փրկողումների: Կառավարութիւնը հարկազրուած եղաւ միջամտել և 300 միլիոն մարքի օժանդակութեամբ կանխել տանհետ կազարաւոր տրեւտեութիւնների անխուսափելի մահը:

Շատ շանցած՝ տոտանկան Գերմանիայ մի ուրիշ ճակայ դրամական հիմերը եւս — Դերգոլնի դանկի: Կառավարութիւնը այդտեղ էլ ստիպւած եղաւ միջամտել, խափանելու համար անհամեմատելի մեծ շարիքներ: Փաստօրէն գերման պետութիւնը ձեռք բերաւ այդ վիթխարի դրամատնային բաժնեթղթերի մեծ մասը եւ հաստատեց իր անմիջական հակակոնտրոլ նրանց վրա: Տարիներին միայն պարզեցուաւ, որ յիշեալ թանկերը փաստօրէն կորցրել են իրենց հարստութեան ոչ պակաս քան 60-65 տոկոսը: Այժմ նոցա պետականացած են, վրասիանի մէջ: Ինչ վերաբերում է Գերմանիայ մասնաւոր ամենամեծ Deutsche Bank ին, նրա կորուստները եւս շատ աւելի պակաս չեն, կազմելով Հիմնական դրամաւորի շուրջ 40 տոկոսը: Թէեւ սա գերծ միաց կառավարական միջամտութիւնից եւ ջանքերից, բայց և ալայնէս, պետական ուժեղացած հսկողութիւնից բարձրունի դուրս մնալ չկարողացաւ: Միւս բոլոր դրամատնները հաշի մէջ չեն մտնում արդէն, այնչափ աննշան են՝ յիշեալների թաղարտութեամբ: Շատերը՝ մի անգամ ընդմիջա զոյցելին իրենց գունըր անաղատէրերի եւ յանախորդների աւջիւ: Այնպէս որ, վերջին հաշուով, այս երկրի մասնաւոր դրամատնները, պահելով հնազեղծ իրենց անունները, այժմ փաստօրէն ներկայանում են պետական բանկի մի-մի բաժան-

մունքներ: Այդ բանիկերի պետականացումը զնեցուաւ շատ թանկ գնով: Բնակչութեան և հարկատուների հաշիւին:

Գերմանիայ ահաւոր տաղնապը արդիւնք չէ՛ միայն տնտեսական և սարակալական՝ ազդակների, ինչ որ են՝ միւս երկրներինը: Նա նոյն չափով հետեւանք է ներքին ու արտաքին քաղաքական յարաբերութեանց, բայց կրում է նաեւ Լոգրամակալ դրոշմ: Ուրիշ Խոսքով՝ նաեւ վստահութեան տաղնապ է: 1931 թ. ամբան, Գերման ժողովրդի մէջ վստահութեան յանկարծական րեկում առաջ եկաւ հանդէպ սեփական երկրի տնտեսութեան ու ելեւմուտքի, ինչպէս նաեւ մարքի կալույն վիճակի: Դրա հետեւանքով էր որ, նոյն այդ օրերին խուռներամ թաղմութիւնները գրոհ տուին դրամատնների ու ինտոլոգական դանձաղիղները վրա, «վերկելու» համար իրենց վերջին խնայողութիւնները: Նրանք մի անգամ արդէն ճաշակէ էին մարքը արժէքազրկման «բարիքները» եւ ողջ մարմնով սարսուռ էին գրում նոր իմփացիայի (թղթաղբարմի արժէքազրկման) ուրականի առջեւ: Այդ մասին բոլոր անկիւններում զորոյցներ էին շրջան առնում այն ժամանակները:

Բայց, իրեն միայն յատուկ կարգապահութեամբ և տոկունութեամբ՝ այս ժողովուրդը յաղթահարեց ստեղծւած ծանր վիճակը, կամովին ենթարկելով Բրիւննիզի հրատարակած ուղղակի դրակոտակի օրէնքներին և կարգադրութիւններին: Եւ եթէ Գերմանիան յուսահատութեան այն օրերին չնետեցաւ էր առջև բացւած անյատակ վիճակը, այդ հետեւանք էր, առաջին հերթին, իր ժողովրդի քնածին կարգապահութեան և շրջահայեցութեան: Այնուհետեւ եւս, ու դեռ մինչև այսօր, նոյն այս ժողովուրդը տարաւ եւ դեռ տանում է անթիւ դժգոհութիւններ, ենթարկելով տնտեսական, հարկային ու ելեւմտական անօրինակ բեռներ, որ ժամանակաւոր օրէնքներին ուժով՝ Բրիւննիզի կառավարութիւնը դնում է նրա վրա: Պայմանները հարկազրուած, ի հարկէ: Փաստօրէն՝ այս երկու տարւայ ընթացքում գերման ժողովրդի սարուստի ընդհանուր մակարդակը իջել է ոչ պակաս քան մի-կերբորը չափով: Աշխատավարձի, ուժնիւների եւ, սուհասարակ, զեկամտանների հրճանումով ու տուրքերի անվերջ աւելումով: Քաղաքակրթի մի մեծ ժողովրդի համար ահաւոր է, ի հարկէ, ստեղծւած վիճակը: Դրա յարատեւումը կապւած է աննախատեսելի հետեւանքների հետ:

Ամենից աւելի այդ դրութիւնը ցայտուն կերպով արտայայտում է գարծաղկութեամ օրաւոր ծաւալումով, որ ուղղակի ահաւել համեմատութիւններ է աւել այստեղ: Անգործութիւնը սովորական երեւոյթ է եղած, ի հարկէ, յետ-պատերազմեան Գերմանիայի համար: Բարդաւաճ տարիներին իսկ՝ 1% — 2 միլիոն անգործներ կային: Բայց նախ՝ երթալով բարձրացաւ դրանց թիւը: Եւ որ նշանակալիցն է՝ 1924 ին յալորդող տարիների անգործութիւնը առաւելապէս այս երկրի ճարտարարւեստի մեղեքմամբ կատարելութեամբ հետեւանքն էր, որից ազգային տնտեսութիւնը, վերջին հաշուով, կորուստ չունեց, այլ շահ՝ միայն: Այդ է պատճառը որ, նոյն այդ տարիներին, Գերմանիայ ընկերային ապահովագրութիւնը ոչ միայն չլուսանդեցաւ, այլ եւ, ընդհակառակը նրանքոր դերքստ ապահովից իրեն համար: Վասնից, ազգային անկցած եկամուտով բաղդատարար դժար էր հուզալ դուրսը մնացած 1% — 2 միլիոն անգործների սարուստը:

Պատկերը բոլորովին արբեր է՝ վերջին տարիներում: Տնտեսական համատարած տաղնապը է՛լ աւելի խորանում ևւ լայնանում է անող անգործութեան պատճառով: Եւ երբ Բրիւննիզը դեռ անգամ վերջերը յայտարարում էր թէ՛ ձմեռը 6-7 միլիոնի հասնել կարող է անգործների թիւը, ամենքը սարսափում էին այդ մտքը առաջ իսկ: Այսօր իրականութիւն է դարձած մտայլ գուշակութիւնը: Գործազուրկների թիւը դեռեթէ 6%

միլիոնի է հասել: Անտարակոյս, դա կատարն է անգործութեան: Գարնան հետ միասին, կը բացւին աշխատանքի որոշ ճիւղեր, դաշտային, շինարարական եւ այլն: Բայց եւ այնպէս, գոհար թէ քիչ միլիոնը իջնի, եթէ համաշխարհային տաշնապը եւ թաղաքական-միջապգային յարաբերութիւնները շարունակեն մնալ պղտոր:

\* \* \*

Գերմանիոյ տնտեսական աճաւոր տաշնապը մեծապէս ազդել է երկրի ներքին-խաղախանայ յարաբերութեանց վրա: Եւ համայնապարական ու հիթլերեան շարժումները առատ սնունդ են քաղում նրանից: 1930թ. սեպտեմբեր 1էի խորհրդարանային ընտրութիւնները դարձանկէս եղան այդ տեսակէտից: Փաստօրէն այդ օրանից ազդին՝ Գերմանիան զգալարեւ է խորհրդարանական երկրի լինելուց եւ կտաովարում է ժամանակաւոր երկրի նկատմամբ ու հրամանագրերով միայն: Հանրապետական Գերմանիոյ Սահմանադրութեան 48րդ յօդուածը այդ վարտուները տալիս է երկրի նախագահին արտակարգ պայմաններին համար: Իսկ յետագը 4-5 ամիսը մէջ միայն դուրսարում է, այն եւս կարճ օրերի համար եւ Բրիւնելիդի կտաովարութեան մշակած ու Հինգերորդի ստորաբաժնի իրենց կողմ օրէնքները վաւերացնելու առաջադրութեամբ:

Բրիւնելիդի դաշինքը իրական մէջ Կեղտոնի (կաթոլիկ) կուսակցութեան կուսակցութիւնն է: Նրանում ներկայացած միւս խմբակցութիւնները շափազանց փոքր են, որպէս թաղաքական կարեւոր ազդակներ դիտուելու համար: Այնպէս որ, Բրիւնելիդի դաշինքը փոքրամասնութեան կտաովարութիւնն է: Եւ եթէ այնուամենայնիւ երկու տարուց ի վեր պահպանում է իր գոյութիւնը եւ վարում երկրի ղեկը ծանրագոյն պայմաններում, այդ միայն՝ Սոցիալ-Դեմոկրատիայի հանդիսանալով եւ լուսինքն ձեռնտուութեամբ: Այսպէս, համայնապարհ-հիթլերեան եւ դերմանապգայնական միացեալ ճակատը դիւրսւ պիտի կարեւոր տապալի:

Սոցիալ-Դեմոկրատիայի համար դերին է ախորժեւի բան չէ, ի հարկէ, կէս-բոնապարտական մի կտաովարութեան յենարան հանդիսանալով, բայց նա այդ առում է թաղաքական հարկադրանքից դուրս: Մէկ էլ միջկուսակցական հաշիւներ անելով: «Մենք առիւով առում ենք հանդուսները», առում էր կուսակցութեան պետ Վելսը իր ճամբերի միկում, «բայց ստիպում ենք անել այդ»: Աջակողման-հիթլերեան հնարաւոր դիվանտարայի երկրները: Այլ եւ Պրուսիայ կտաովարութեան մէջ տասը տարուց ի վեր գրաւած իրենց աճուր դիրքերը չկորցնելու մտահոգութիւնից: Իսկ այդ հնարաւոր է՝ Կեղտոնի հետ հաշտ եւ համերաշխ թաղաքականութիւն վարելով միայն:

1930թ. սեպտեմբերեան ընտրութիւնները զգալի փոփոխութեան ենթարկեցին կուսակցական փոխ-յարաբերութիւնները Գերմանիայում: Հիթլերեան կուսակցութիւնը, որ մինչ այն բաղադատարար երկրորդական խմբակցութիւնն էր միայն եւ հապի 27 պատգամաւոր էր հաշուում Ռայխստագում, զբաղեց թիւը մէկէն ի մէկ 107ի հասցրեց, զբաւելով երկրորդ տեղը, սոցիալ-դեմոկրատ խմբակցութիւնից յետոյ: Պարլամենտարական յարաբերութիւնները հիմնովին շրջեցան: Համայնապարհ եւ գերմանապգայնական անկատախաճատու ընդդէմդիրքերի եւ հակախորհրդարանային, հակահարապետական շարքերը սուսարացան ութսուն նոր անդամներով: Բուրքը միասին կայմում են դրեթի կէտ Ռայխստագի անդամներին ընդհանուր թիւ: Իրանից էլ՝ խորհրդարանական կեանքի կապալայով վիճակը, 1930ի սեպտեմբերից ազդին:

Գերման կուսակցութիւնները մեծ մասով նախապատերազմեան շրջանի ծնունդ են: Շատերը միայն նոր անուններ են առել իրենց վրա, հանրապետական վարչակարգի տառջին օրերից: Այսպէս, Նախկին պահպա-

նողական կուսակցութիւնը վերամկրտել դարձել է գերման «ազգային-ժողովրդական» կուսակցութիւն, ազգային-ապստանականները՝ «ժողովրդական», իսկ յառաջադիմականները՝ գեմեյնար թէ բոլորովին վերջին՝ պիտակական կուսակցութիւն:

Նոր է բոլորովին, իբրեւ կաղանկերպութիւն եւ թաղաքական ուրոյն ոյժ, այսպէս անունաւ Գերմանիոյ Ազգային Ընկերավարական-Բանարական կուսակցութիւնը (կրճատ՝ Նացի), Արտիք Հիթլերի ղեկավարութեան տակ:

Հիթլերը ջատաւունք նոր անց մէկն է: Բնիկ աւստրիացի, ծնւած Բաւարիայի սահմաններում մի վարում: Որդին մաքսային փոքր պաշտօնային: Ինք մանուկ հասակում կորցնելով շօրը՝ ստիպւած է լինում ուսուցը իրանա թողնել եւ արհեստ սովորել — ներկարարութիւն, փոխան նկարչութեան, որ մանկուց իր իղէպը եղած է:

Վիեննայում էլ շարք տարիներ բանցնում է իր արհեստը: Պատերազմի նախօրէին անցնում է Միւնխեն եւ քնակութիւն: Հաստատում այնտեղ: Հակաուսուրդներին անկում՝ պատերազմից խուսափելու համար: Ինքը պնդում է, սակայն, եւ իտալարանն էլ կարծեմ հաստատել է, որ Աւստրիոյ պաշտօնաստները նրան իր կապէս պիտանի չեն համարել — առողջական տեսակէտից — գինւորական ծառայութեան համար:

Այսպէս կամ այնպէս, պատերազմը բռնկելուն պէս Հիթլերը կամարում է զբաւանք գերման բանակում եւ կուր դաշտ մեկնում: Վիրաւորում է եւ երկար ժամանակ անկողնին ծառայում: Պատերազմի վախճանում եւ դեռ քառական-ժամանակ՝ Հիթլերին անունը ոչ ոք չէր լսել: Ներկայ չէ եղել մինչեւ իսկ առաջին ժողովներին, ուր մի քանի հոգի հիմնել են «Գերման-Բանարական կուսակցութիւնը»:

Ինչ յետոյ՝ Հիթլերը գործի մէջ է խառնել իր ողջ էութեամբ եւ իր ձեռքն առել ղեկավարութիւնը նոր կուսակցութեան, փակցնելով նրան եւ «ընկերավարական» պիտակը:

Առաջին մեծ ելույթը տեղի է ունենում Միւնխեն, 1923ի նոյեմբեր 9ին, գերման յեղափոխութեան օրը: Վերջինս եւ նրա հեղինակները հուշաւում են Գերմանիոյ պարտութեան բուն պատճառը, կողքից դաշտին հարած հասցնողներն Վերսալ, հատուցումներ ու ամէն կարգի շարքերը բարձում են Հանրապետութեան եւ հանրապետականների ուսերին: Նոյն այդ երեկոյին Միւնխենի գաբելըտաներից մէկում գումարած նացիներին այդ միտինը՝ Բերլինի կտաովարութիւնը յարարարում է տապալած, Հիթլերին հուշաւում է շուր կտաովարութեան» վարչապետ, իսկ զօրավար Լուդեն-դորֆին՝ գինւորական նախարար:

Գաբելըտան պրոթիւումը (Putsch) խեղդում է իր բնում: Տեղի է ունենում դատապարտութիւն: Լուդենդորֆը արգարանում է, իսկ Հիթլերը բանտ առաջնորդում մի ղոնով, թիչ անց՝ միւս ղոնով դուրս գալու պայմանով:

Այնուհետեւ Հիթլերն որդեգրում է բոլորովին նոր գործելակերպ: Իր հակաուսուրդի ղեկներով եւ հանրապետութեան ընձեռած միջոցներով փորել նրա տակը:

Սկսում է զանգաւածային մի շարժում: Համատարած անդործութիւնը պարարտ դախին էր դրա համար: Ոչ պակաս չափով նաեւ՝ մարիկ արժէքազրկման հետեւանալով սեփականապարզ դարձած լայն խաւերը՝ միջին դասակարգից: Ապողասակարգայնացած զօրականներ եւ, հարկեր հապտերով: Այլ եւ պրոլետարացած մտաւարականներ եւ համալարանաականներ: Անորոշ, անյուսույթ անպապայն առաջ կեցած ուսանողներ եւ աշակերտներ: Հին կուսակցութիւններից սրբողած եւ կամ յուսալքած բանտորներ կարճ՝ «գոգահաների բանակներ», որոնք զօրավար չէր այն հանգումը ներշնչել, թէ բոլոր դժբախտութեանց բուն պատճառը Հանրապետութիւնն է:

Ինչ խօսք որ խոշոր գործարանատերեր և մասնաւորապէս ծանր Ծարարութեամբ ձեռքի տակից նիւթատէս շատ է օղնել հիփոսիւնեան շարժման յաճողութեանը, հակադրելու համար ատելիք ընդերմարական կարգակերտութեանց և նրանց ստեղծած քնկերային կարգերին: Ինչ տարակույս, որ Հիփոսի իր կարգակերտչական արտակարգ կարողութիւններով և հետադարձ կանգնելու տարանորոշ գիտցել է ի մի հաւաքել, համայն հարկեր հազարներէ և միլիոններէ թայծութիւններ: Եւ, սակայն, այդ բոլոր սեղմերը մացիական ծանօթ պտուղները չէին տայ սնուց, եթէ ըստ ամենայնի պարարտ հողի մէջ յցանկէին: Եւ եթէ իւրաքանչիւ արեւներ փերմութիւն շտապին նրանց: Յողթականներն անողքը կեցածքը պարտաւր Գերմանիոյ հանդէպ, վերջինիս յօշոտումը և անվերջ զրկումը, այլ և ոսկի դէզդիքի պահանջը շարունակ — մի խոշոր մասող կատարելին այդ դերը: Աւ Հիփոսի փրատարապէս րմբռունց՝ օգտագործել այդ ամենը, յօշուտ իր ծրագիրներէ: Չանդաձծները նրան ընդունեցին փրկել իրենց փրկել: Յոյսն ու սպաւէնը ստրկացեալ հայրենիքէ: Ամենակարող մարդը, որ իշխանութեան գլուխ գարուն պէս աշխատանք պիտի տայ միլիոնաւոր անդործներին և հաց շաղպածներին: Չէ՞ որ նրա ծրագիրն ևս ընդկերպարական» կարգերի կողմնակից է, ջատագով հասարակութեան և եղբայրութեան: Իրա վրա աւելցնելով և հայրենիք պաշտամունքը, ազգի պաշտպանութիւնը: Ազգային-ընդերմարական» միանգամայն: Ամէն մի բանորի հարու խորքով խօսում է նաև ազգի ու հայրենիքի ցուր: Աւելի լաւ, աւելի ինչպիսիան» Եթէ ազգայինը և ընդերմարական» միացնել ու համերայնացնել կարելի է: Այդ գիտէ անել Հիփոսը: Ահա այս խոր հաստուն ունին իր միլիոնաւոր հետևորդները: Այլապէս, կարելի չէ բացատրել հասարակական նման մի շարժում, որ հսկայական է փր շափերով: Աննախընթաց՝ իր դարձագման ընթացքով ու ծաւալման թափով: Այդ շարժման առաջը կարելի է առնել միայն մէկ միջոցով — վերացնելով նրան սնունդ տուող պատճառները: Արմատից լուծել հատուցումներ ինչպիսի, քննել պատերազմական պարտքերը, ճանաչել գերման ժողովուրդի իրական հասարակութիւնը ազգերի համակցութեան մէջ, վերջ տալ համատարած անգործութեան, — ահա այդ միջոցը, որ նշանակում է ինքնին Հիփոսականութեան ոտք տակից հանել հողը:

\*\*\*

Մի քանի խօսք էլ ընտրական շրջանի» մասին, որ ներկայիս անցնում է Գերմանիան, և ուր ամենէն աւելից պատուէ կերպով հանդէս են դալիս կուսակցական և ներքին-քաղաքական յարեւրութիւնները:

1925թ. փետրուար ամսին մեռաւ Գերման Հանրապետութեան առաջին նախագահը, սոցիալ-դեմոկրատ Էրիսթ, զեռ չըբարյաժ իր պաշտանակարութեան շրջանը, որ եօթը տարի է, Սահմանադրութեամբ:

Էրեթրան յաճողից մարտիստ Հինդեմարդ, ազգայնական-սոցիալիստներին թէնտուռն այն ժամանակ: Այդ տարրերը Հինդեմարդի անձի մէջ տեսնում էին կայսերական Գերմանիոյ մարմնացումը և յոյս ունին, յիշում նրա ժողովրդականութեան վրա, վերականգնել հին կարգերը:

Պաշարի գլուխ անցած էր Հուգենբրոք, գերմանազգայնականների պետը: Հիփոսի անունը դեռ նոր նոր էր լուում:

Հինդեմարդ շարքաբացրեց անկողմնանների յոյսերը: Հաստատրմ մնաց իր երգման և չխախտեց Սահմանադրութիւնը: Իր հին բարեկամները յուսախար եղան՝ տեսնելով որ միակողմնութեան վերականգնումը չաւանդում է, գրեթէ անկարելի դառնում: Շատեր սկսան նոր ուղիներ որոնել: Համերայն իրենց ատելութեան մէջ հանդէպ հանրապետութեան, այդ նորերը Հոհենցոլլերներէր՝ դահը վերականգնելու մէջ չփնտեցին

Գերմանիոյ փրկութիւնը, այլ ուժեղ զեկամարի անձնական իշխանութեան մէջ: Հիփոսը հուշակեցաւ այդ մարդը: Աւելի չուս՝ նա պարտադրեց ինչպիսիք, իրբը Մեախան Փաշական Գերմանիոյ:

Որպէս այդպիսին՝ նա ինչպիսիք հակադրեց ոչ միայն ընկերայնութեան և համայնակարութեան, հանրապետութեան և հանրապետականներին, այլ և բոլոր հին կուսակցութիւններին, մէջը լինելով նաև գերմանապաշտականները: Մրանցից նա վարուց է խել առաջնութեան դիրքերը հակահանրապետական ճակատի վրա: Հարցերուդի ճակատը, ուր պահ մի ճով-ջով էին եկած բոլոր այդ տարբերը, փլել է արդէն: Հիփոսը չի ճանաչում և ոչ մի պայման, այլ ենթարկումն էր հեղինակութեան:

Մարտ 13ի նախագահական ընտրութիւնները անցան աննախընթացից կատարի պաշարների տակ: Իրիւնիսի սկզբնական փորձերը երկարաճել Հինդեմարդի պաշտամարութեան շրջանը խորհրդարանային ճանապարհով՝ հանդիպեցին Հիփոսի և Հուգենբրոքի բուն զիտադրութեան: Արդէն ելք էր մնում, քան նոր ընտրութիւններ նշանակել:

Հինդեմարդը երկար վարանուածից յետոյ դրաւ իր թեկնածութիւնը, որ առաջ էր քաշել արտակուսակցային մի յանձնաժողով, Իերլինի քաղաքագլուխ Չամի նախագահութեամբ: Հուգենբրոքը առաջ քաշեց զպողպատե սողաւարակիրներ» կոչումը միապետական պատերազմիկների խոշոր միութեան նախագահ Դիւստերբրոքի թեկնածութիւնը: Այդ միութիւնը, որի զատուաւոր նախագահն է Հինդեմարդը, ցուցաբերեց լեցի վերջինիս, իրբ ասելի հանրապետականների թեկնածուի: Համայնակարների թեկնածուն որոշ էր — իրենց պարագլուխ Թեյման: Ամենից վերջը յայտնի դարձաւ Հիփոսի թեկնածութիւնը:

Ընտրութեանց առիթ կուսակցութիւնները հանդէս բերին իրենց կարգակերտչական ամբողջ մեքենան և ձեռքի տակ ունեցած բարոյական և նիւթական բոլոր միջոցները: Գերման հանրապետութեան լինել-չլինելու խնդիր էր դրւած մէջ տեղ: Եւ, ո՞վ հեղինակէն ճախատազրի, Հինդեմարդը՝ հանրապետականների յոյս և սպաւէն: Ըմբունի կարելի է սոցիալ-դեմոկրատիային ներքին ողբերգութիւնը: Բայց, մարդիկ անվարան հրապարակ եկան ի պաշտպանութիւն Հինդեմարդի, իրենց ամբողջ թափով: Առաջ իսկ՝ քար դնելու սրտների վրա: Լուրջ և դրապաշտ քաղաքականութեան հետեւելով: Նախապետութիւն տալով փոքրագոյն շարքերին: Աւելի չուս՝ զուսնալով փոքրագոյն բարեքով:

Ու սոցիալ-դեմոկրատ պարագլուխների յոյսերը արդարացան աւելի շափերով, քան երկադրել կարող էին՝ ամենէն լաւատեսների անցամ: Երանց յալողեացաւ կարգապահ շարքերով քէհատուփերի մօտ տանել մինչև վերջին մարդը իրենց կուսակցականներից և ամակիրներից, և ամենի բէկներ մարտախախ վրա կենտրոնացնել: Ինչ կարգապահութեամբ որ եօթը տարի առաջ՝ նոյն այդ մարտու դէմ էին բէհարկել: Մարտ 13ի օրը, համոզում էին բոլորը, հարկեր հազարաւոր բանուրներ դերաշափելն պիտի անպատճառ անկարգապահ դտնելի ու համայնակար բանուր Թեյմանին ձայն տալ — չէ՞ որ գաղտնի է քէհարկութիւնը — քան՝ կայսերական զօրավար Հինդեմարդիքի:

Այդպէս չեղաւ, սակայն, Հինդեմարդի ստացած 18,6 միլիոն բէկներից մօտ 8,6 միլիոնը սոցիալ-դեմոկրատ ձայների ճնշելու է: 1930թ. սեպտեմբերի խորհրդարանային ընտրութիւններին աւելի ձայներ չէին շահել արդէն: Մնացած 10 միլիոն բէկները պատանաւուն են կէս առ կէս մօտաւորապէս, Կեդրոնին և միւս բոլոր կուսակցութիւններին: Հինդեմարդը շրնուրեցաւ թէ և այս նալ — նրան պակասում էր ընդամենը 170 հազար բէկ — բայց սպաւէնով է այժմէն, որ ապրիլ 10ի քէհարկութեանը պիտի անցնի իր թեկնածութիւնը: Տրւած ընդամենը 37,6 միլիոն բէկներից

Հիթերը շահեց 11,3 միլիոնը, Թեման՝ 4,9, Դիւտեր-  
բերդ՝ 2,5 միլիոնը: Ամենը միասին ստացել են, ու-  
րեմն, հազիւ այնքան, որքան Հինդեբուրգը միանալ:  
Ապրիլ 10ի կրկնաբազմաթեան համար հանած է  
Դիւտերբերդի թեկնածութիւնը: Մնում են Հինդե-  
բուրգը, Հիթերը և Թեման: Որ ստաջիւնը կընտրուի,  
կասկածից դուրս է:

Մարտ 13ի քաղաքապետը ուրիշ խրատական կող-  
մեր ևս ունի: Եթէ նա, մի կողմից, Հինդեբուրգի  
վերջնական ընտրութիւնը ապահովեց, միւս կողմից էլ  
իր հետ բերաւ մեծ յաջողութիւն Հիթերի համար: Եւ,  
ընդհակառակը, թեթեւ յուսախաբութիւն՝ համայնա-  
վարները համար: Վասնզի, ոչ միայն սոց-դեմոկրատ  
քանդակներ — լինէին մինչև միակ ջեր թուր — ձայն  
չուին Թեմանին, այլ և վերջինիս քեշները պակաս  
զուր ևեան էերլինում, Համբուրգում և համայնա-  
վարների մի քանի ուրիշ միջնաբերդում, քան 1930ի  
սեպտեմբերի ընտրութեանց ատեն: Հիթերեանները  
ձայների թիւը, ընդհակառակը, գրեթէ կրկնապատկե-  
ցաւ, նոյն քաղաքապետի համար: 1930թ. սեպտ. 14ի 11,3  
միլիոնի դիմաց, որով Հիթերեանն պատգամաւորների  
թիւը 27ից մէկէն 107ի բարձրացաւ, այս մարտ 13ին  
Հիթերը շահեց 11,3 միլիոն ձայն: Այդ համեմատու-  
թիւնը արդէն աւելորդ է դարձնում ամէն մի մեկնու-  
թիւն: Այդ թիւերը խորհրդածութեան և մասնազուրկեան  
առատ նիւթ են տալիս ինչպէս Գերմանիոյ ներքը, այն-  
պէս և Երանից դուրս:

Ընտրական շրջանը մարտ 13ով ու ապրիլ 10ով  
չպիտի սահմանափակուի: Նւազ Կարեւորութիւն չունի  
և ապրիլ 24ը: Այդ օրը սեղի պիտի ունենան Պրուսիոյ,  
Բաւարիայի, Կիւրտենբերգի և Գերման Դաշնակցու-  
թեան մաս կազմող մնացած գրեթէ բոլոր ինքնավար  
երկրամասերի խորհրդարանային ընտրութիւնները:  
Պրուսիան մինչևից աւած՝ այդ գրեթէ ողջ Գերմանիա  
ասել է, իսկ Պրուսիան, տեսանք արդէն, տարւ  
ներից ի վեր՝ գերման սոց-դեմոկրատիայի անստիկ  
բերդն է համարում: Գրոշով ասեն այն — կազմում  
է բոլոր և կախահանրապետականների կէտ-նպատակը:  
Հիթերից սկսած և Հուգենբուրգի վրայով մինչև Թե-  
ման:

Մարտ 13ի ընտրական ընդհանուր ռազմափորձը  
ցոյց տաւ սակակն, որ սոցիալ-դեմոկրատիան զիւն  
վտանգի րոպէին իր պահհաստի վերջին ուժերն իսկ հա-  
տաքել թանգ զեով ձեռք բերած հանրապետական  
գրեթէ բոլոր պաշտպանի կարենալու համար:

Պիտի յաջողի՞ նա ապրիլ 10ին և, մանաւանդ,  
ապրիլ 24ին հանդէս բերել նոյն այդ կորովը և ձեռք  
բերել նոյն յաջողութիւնը: Մարքաբէնալ արւած չէ՞  
ամէն մարդու: Զմտանանք, յամենայն դէպս, որ  
ստորբերութիւնը նախադահական և խորհրդարանային  
ընտրութեանց միջև աննշան չէ՞:

Ա. ԱՅԵՆԱՆ

### Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ծ Ի Յ Ն Ե Ր Ս

(Խորհրդ. Միութիւն և Հայաստան)

Խորհրդային Միութեան կեանքը անցած ամառը-  
շնունը հարուստ չէր գէպերով: Արտաքին ճակատի  
վրա — զօրքերի համարձակումը Հեռուոր Արեւելքում  
ճապոնական յարակիցացման առթիւ, Լիտվիոյի  
մասնակցութիւնը Ժրնեի Զինաթափութեան Որոշը-  
զածողովին և րոյշեիկեան ծրագրի մերժումը, գերման  
դեսպանի մահափորձը Մոսկուայում, որի ժամանակ  
վիրաւորեց դեսպանատան խորհրդական Փոն-Տվար-  
զովսկին, դէպի Ռուսմանիա փոխընդ դիււարացիների կո-  
տորած Դնեստր գետի սառոյցների վրա և, կարելի է  
ասել, ուրիշ ոչինչ:

Ներքին կեանքում էլ աչքի ընկնող երևոյթներ  
չպատահեցին: Խորհրդային « հասարակաշնութիւնը »  
կրկնաձեռն է տնտեսական հոյակերով — Բողովուրդը հեր-  
թի է կանգնում մի կտոր սե հաց կամ մի քանի սե-  
լեողկա ստանալու համար, կոլտոններն ու սովխոզ-  
ները կառավարութեան ու Կոմկուսի ղեկավարութեան  
աակ հաւաքական պայմանագրութիւններ են կնքում,  
կամ սերմացու հաւաքում. գարնանացանը թոյլ է գար-  
գանում: Խորհրդային արդիւնաբերութիւնը դրազում  
է «եղբարեացի» լինելով: Թէև ձմառաների հետու-  
ղիարձը բարձր է, բայց մի շարք շրջաններում, Ու-  
րալում, Վոլգայի աւազանի վարք մատուտ հացի ամ-  
բողջ պաշարն արդէն սպառած է, սովի ծանր օրեր են  
վրա հասել, և Բողովուրդը սկսել է գաղթել դէպի  
հաց գտնուած վայրեր: Առհասարակ, րոյշեիկների  
համար վատ պայմաններում է սկսում նաև այս տար-  
ւայ գարունը:

Անդրկովկասում էլ անցեալ ամառը շրջանը անցաւ  
աւանց նշանաւոր գէպերի, եթէ չհաշուենք Անդրկով-  
կասեան Դաշնակցութեան տասնամակը, որ տունը  
հանդիսաւորակ մարտ 12ին: Զակֆեդերացիայի  
պատմութիւնն ու զնահաստանը արւում է «Իրօշակի»

այս համարում առանձին յօդւածով, ուստի այստեղ  
ամփոփենք միայն տնտեսաարտութեան վերաբերեալ  
նիւթը:

Մարտ 12ին լոյս տեսաւ Համ. Կոմկուսի Կենտկոմի  
հանդիսաւոր դիմումը Անդրկովկասի քանդակներին և  
աշխատաւորներին, որի մէջ վեր էին հանում Զակֆե-  
դերացիայի բերած արեքները: Նոյն օրը հրատարակ-  
ւեց Անդրկ. Կենտրոնկոմի որոշումը ներումի մասին.  
յօրեկեսանակն տնտի առթիւ, դատարան իկամ Գէպէտի  
վճռով մահան դատապարտւած, բայց դեռ չզնչակա-  
հարած քանտակաշինների պատժը փոխարինւում է  
10 տարւայ կայանաւորումով ու սեփականութեան  
գրաւումով, բայց պատժի այս մեղմացումը չի վերա-  
բերում խորհրդային իշխանութեան տապալման կամ  
տկաբացման ձեռնող ջարդապակ կուսակցութիւններին  
ու խմբաւորումներին գործօն անդամներին, ոչ էլ հա-  
կայեղափոխական և պետական յանցանքների կազմա-  
կերպողներին ու ղեկավարներին: Մէկ տարւայ աւելի  
քանտարկութեան պատժի դատապարտածներից աշ-  
խատաւորների պատժի տեղողութիւնը կրճատում է  
էլ հետո, իսկ միւսներին՝ մէկ երորովով: Այս կէտն էլ  
չի տարածում վերոյիշեալ կարգի ջարդապակն քան-  
տարկանների վրա: Պատժների որոշ կրճատում ար-  
ւում է և մի շարք աւելի մեղմ յանցանքների համար՝  
հարկեր չվճարելու, աշխատանքի և դիւտարական կար-  
դապահութեան օրէնքները խախտելու և այլն: Ինչպէս  
ստեղծում ենք, իր րոմանկութեամբ ներումը այնքան  
էլ համապատասխան չէ այն աղմուկին, որ հանում է  
Զակֆեդերացիայի տասնամակի շարքը:

Տօնի առթիւ, դարձաւ Անդրկ. Կենտրոնկոմի  
որոշումով, մի շարք րոյշեիկ գործիչներին, որոնց մէջ  
պատկառելի թիւ են կազմում մասնաւորակէս Գէպէտի  
գործակալները, շնորհել և Աշխատանքի Կարմիր Գրո-  
շի պատանշանը: Վարձատրածների շարքին են հա-

յաստանի Գէպէտի նախագահ Արուսեանը, Անդրկ. Գէպէտի նախագահ Ազրբայան, Հայկենադրոժկոմի նախագահ Արծ. Անանեանը, Ազրբայանի ժողովմորտի նախագահ Բունիսի Զարէ Կուզալը, Հուսէյնով Միրզա Դուռուբը, Կարախե Ալի Հալաբը, Վրաստանի Գէպէտի նախագահ Լորդիկիանիձէն, Մախարաձէ Ծիլիլու, Նազարեթեան Հմայակալը, Ազրբայանի Գէպէտի նախագահ Յըէնովսկի Մ., Ազրբայանի կենադրոժկոմի նախագահ Իֆէնդիբեյը և ուրիշներ:

Տօնի օրը, բնականաբար, հանդիսաւոր ժողովներ ու Քափօրների տեղի ունեցան Մոսկուայում, Թիֆլիսում, Բաքուում, Մերեանում և ուրիշ զաղաքներում: Մոսկուայի ժողովը հաւաքեց Կրեմլի մեծ սրահում: Ժողովի նախագահները բնութեցին Յիսակայա, Շ. Էլիսաւա, Թադիւս, Գոգիւս, Եզորով, Տաճիկիստանի, Թուրքմենիստանի, Բելոռուսիայի, Պորտուգալի, Պորտուգալի, Ռուսաստանի ներկայացուցիչները և ուրիշներ — և ո՛չ մի հայ: Ժաւեր խօսեցին էլիսակայ և ուրիշներ — նոյնպէս ո՛չ մի հայ:

Անդրկովկասի կառավարութիւնը ստացաւ բազմաթիւ ողջոյնի հեռագրերն — Պորտուգալ. Միութեան կենադրոժկոմից և ժողովմորտից և Ազգերի Պորտուգալից, Չինաստանի բնութեցին Յիսակայա, Շ. Էլիսաւայի, Հանրապետութեան կենադրոժկոմից, Չինաստանի կարմիր Բանակի Չինուրայանի Պորտուգալից, Գերմանիայի կոմկուսի կենադրոժից, Լեհաստանի կոմկուսից, Բելոռուսիայի կենադրոժկոմի նախագահ Չերվեակովից, Կալինինից, Վորոնիլովից, Մակիմ Գոբլիցից, Կլաւս Յետկից և օւրիշներից: Ասանձնապէս ուրախալէ է, ի հարկէ, որ չինացիները չեն մոռացել չորհրդաւորել Չափեղեղեղացիայի յօրեխոսը...

Տօնական հանդէսներէջ սանցելով սովորական կենսքին առանձին ոգևորիչ գործեր չենք կարող արձանագրել — ամէն տեղ խօսուում է միայն ճեղքաձեւները ու թերակատարումները մասին: Գարնանացանք սկսում է, բայց սերմացուի հագրւ կէսն է հաւաքում, տրակտորների և գութանների խոյնչիչ հագրւ կէսն է նորոգում, չինարաբրիկները շատ տեղ կանգ է առել իւրութիւն պակասի պատճառով, արտադրական ծրագրերը չեն իրագործուում, երկաթուղին ոտքի չի կանգնում...

Օրինակներով չձանրաբեռնենք մեր տեսութիւնը: Ընդհանուր առմամբ, նրաք բնոյթը նոյնն է ինչ որ և Հայաստանում, բայց այն դէպքեջ երբ յատուկ ճեղք է նկատուում կենարոնում նստած վրացի ազգեցիկ բուշիկներ կողմից:

Գալով Հայաստանին՝ այստեղ էլ անցեալ ամառը մանր ճամբար դէպքերի շրջան եղաւ: Շատ ազմուկ հանեց, բնականաբար, Չափեղեղեղացիայի տասնամեակի շուրջ: Մարտ 12ին Երեւանում կատարեցին տօնական հանդէսներ — Քափօրների ու ժողովների, զօրահանդէս ու բանուորական շքերթներ: Ի յիշատակ օրւայ տօնի Հիմը դրեց զաղաքային տնտեսութեան թանգարանի ու օլպակայանի: Կուլտուրայի տանը բացեց Անդրկովկասի Գանապետութեան տասնամեակին ներքաձ մի ցուցահանդէս: Մի ուրիշ ցուցահանդէս էլ բաց արաւ Հայկիմով Անդրկովկասի տնտեսական ու մշակութային նաճարները: Մասին՝ ըն յաւերժացումն Պորտուգալ. Հայաստանին մատուցած բացատրիկ ծառայութիւնները, Հայկենադրոժկոմի նախագահութիւնը Աշխատանքի Գրոշակի պատուականները շնորհեց մի շարք բարձր պաշտօնեաների, Գէպէտի ծառայողների ու բանուորների, ի թիւս որոնց և ժողովմորտի նախագահ Մ. Տէր-Գաբրիէլեանին, կենադրոժկոմի փոխնախագահ Ռ. Դաշոտյանին, կոմկուսի երկրորդ բարտօնար Մ. Օթեանին և այլն: Հայկոմիուսի կենտկոմը հոնքերսեան ոճով շարադրում մի-հաւատարմական հեռագիր ուղղեց Ստալինին, որ սկսուում է այսպէս.

«Քե՛զ, Լենինի հաւատարմաբան աշակերտին, որ բուշիկներն անհաշուութեամբ պահպանում են մարքոյթիկներինիզմի դաշնադարական մաքրութիւնը, ըն՛դ, որ ընկ՝ Լենինի հետ միասին ազգային հարցի տեսարանն ու Չափեղեղեղացիայի ստեղծագործութեան ներշնչողը հանդիսացար, նրա առաջին հերոսական տասնամեակի օրը, յանուն Հայաստանի բոլշիկները, բանուորների և աշխատար գանգաւանների, բացառու ողջոյն է ուղարկում Հայաստանի կոմկուսի կենտկոմը»: Զիշտ նոյնպիսի հեռագրերն էին տալիս Արքուշ Համիզի հարտակները կայսերական տօներին...

Մինչ մի կողմից տօն ու հանդէսներ են կատարուում, միւս կողմից կանգը բոլոր ճակատներում ճեղքաձեւներ ու թերակատարումներ է տալիս: Օրւայ ամենահրատապ խոյրը գարնանացանն է. կոմկուսն ու կառավարութիւնը լարում են իրենց բոլոր ուժերը ստիպելու համար գրեզացուն, որ վարեն ու ցանեն, բայց վերջինս ամէն կերպ խուսափում է: Առ 10 մարտի, երբ ցանքն արդէն սկսւում էր, Հայաստանում ապահովւած էր սերմացուի միայն 51.4%ը: Գլխաւոր հացահատիկային շրջաններում դրութիւնն աւելի վատ էր. Մարտունիի (նախկին Դարանուիի) շրջանում ապահովւած էր սերմացուի 28.5%ը, Բաւարդէշարում՝ 30.3%ը, Նոր-Բայազետում՝ 33.8%ը, Դարաբրիխասում՝ 37.9%ը, Ստեփանաւանում (Ջալա-Օլլի)՝ 38.7 տոկոսը, Լենինականում՝ 41.4%ը, Արարանում՝ 41.7 տոկոսը: Իսկ Տէշէքեղեղում տոկոսը հասնում էր 19.9%ի, Դափանում՝ 11.9%ի:

Նոյնքան և աւելի վատ էր նաև սերմացուի զտման գործը: Միայն 3 շրջանում — Գորիս, Գիլիման և Քէշիշէնը — գտւած էր սերմացուի կէսը, միւս տեղերը՝ հազի 10-20 տոկոսը: Առանձնապէս յետ էին մնացել Դափանը՝ 2%, Բաւարդէշարը՝ 3.1%, Փաշալուն՝ 8.3 տոկոս, Մարտունիի՝ 9%, Արարանը՝ 9.5%, Արասնը՝ 11.2%, Սիսեանը՝ 11.7% և այլն: Սերմը չի մաքրել սերմագատիչների պակասութեան պատճառով. վերջիններքս 50% է միայն նորոգում: Որտա յետ է մնացել և միւս տեսակի գործիքների ու մեքենաների նորոգութիւնը: առ 10 մարտ նորոգւած էր տրակտորները 72.7%ը, գութանները 36.5%ը, ցարսանները 46%ը և այլն («Ձ. Վ.՝ 16 մարտ): Այս պայմաններում գարնանացանի ծրագիրն, ք հարկէ, չի գործադրի:

Թէ ինչ վիճակում է գտնուում տրակտորների նորոգման գործը, յոյց է տալիս «Ջարեա Վաստակայի» (1 մարտ) հետեւեալ մերկացումը. «Անդրկովկասի 49 մեքենատրակտորային կայաններից և ոչ մէկը մինչև այժմ չի ստացել յունար և փետրաւոր ամիսների ընթացքում ուղարկւած պահեստի բոլոր մասերը: Յունարին ուղարկւածներից տեղ է հասել միայն 70%ը, իսկ փետրաւորի՝ 15-20%ը»: Ուղարկւած մասերը մոլորւած թափարուում են ճանապարհին: «Աւարաբայատի համար ուղարկւած են Թիֆլիսից յուն. 12, 17, 22ին և փետր. 1, 10, 14, 19, 20 և 23ին, Ստեփանաւանի համար՝ յունար 1ին և փետր. 28 և 29ին—ոչ մէկը տեղ չի հասել»:

Նոյն երևոյթը և Չորագետում, Բիւշիմատ ու Յիւշիմատ:

Չորագետի «խայտառակութիւնների» մասին շատ է գրւած: Վերջին անգամ «Ջարեա Վաստակայի» խմբագրութիւնը հեռագրական բողոք էր ուղարկել հարորդակցութեան գործավար Անդրէյսին, որ Չորագետի յատկացւած բեռները կորել են երկաթուղու վրա: Այդ բեռների մի մասը մինչև փետր. 27 ղեռ չի գտնւել, յետոյ որ յունար 10, 13, 19 և 29ին են ճանապարհ հանել Մոսկուայից ու Լենինգրադից: «Ջարեա Վաստակայի նորից հեռագիր է տրել Անդրէյսին. տեսնենք այս անգամ ինչ էլ ինչ կրնի արելուք: Փաստը այն է, որ Չորագետը երկրորդ անգամ նշանակւած ժամանակին էլ չպիտի հասնի:

Չպիտի աւարտել ժամանակին և Բիւշիմ կառու-

ցումը: Սրա պատմութիւնն էլ տալիս է «Ջ. Վաստոկան» (27 փետր.): Դարաքերիխայում զիմիական գործարան շինել որոշում է 1929ին և նոյն տարւոյ աշնանը սկսած են աշխատանքները: Գործարանը պիտի բացէր 1931թ. Հոկտեմբերին և իր մեծութեամբ պիտի լինէր երկրորդը ՊորՏը: Միութեան մէջ: Պիտի արտադրէր տարեկան 20,000 տոն ցիւանամիր (պարարտացման նիւթ) և 27,000 տոն կարբին և մօտ մէկուկէս միլիոն խորանարդ մետր թիթեանի:

1931թ. հոկտեմբերը եկաւ ու անցաւ: 1932թ. փետրարին էլ անցաւ, բայց Բիմշինը չի բացուում: Յնչս չկայ, որ մինչև Հոկտեմբեր էլ բացի: Պատճառը: Բանից դուրս է գալիս, որ յատակաքերը պատրաստ չեն և նիւթ ու սարքաւորում չկայ: Բիմշինի ծրագրերի ու յատակաքեր պատրաստելը իր վրա է ստել Գիպրոսիւնը: Պայմանագրով պարտաւորել է հասցնել պահանջւած բոլոր ծրագրիները 370,000 րուբլով, բայց արդէն տասցել է 580,000ր. և դեռ 150,000 րուբլի էլ է պահանջում մնացած մասերը պատրաստելու համար: Այսպիսով, ծրագրիներէ ու յատակաքեր վրա ծախուում է գործարանի ամբողջ արժէքի վեց տոկոսը, փոխանակ որոշւած 1—1,5%օ: Այդքան անելի զբառ ստանալով հանդերձ՝ Գիպրոսիմը յատակաքերը ժամանակին չի հասցրել: վերջին յատակաքերը պիտի տար 1930թ. դեկտեմբերին, բայց մինչև այժմս էլ տւել է միայն 80%ը:

Թէ ինչպէս է շինուում Բիմշինը, ցոյց են տալիս հետևեալ փաստերը. երբ ամբողջ շէնքը արդէն պատրաստ էր, 15 մետրանոց հիմնական սիւները կանգնեցւած էին և մնում էր միայն կտուրը ծածկել, Գիպրոսիմից, յանկարծ, հրաման եկաւ ընդհատել աշխատանքները և սպասել նոր յատակաքերի, որոնցով սիւները պէտք է բոլորովին ուրիշ ձևով դասաւորէին... «Նման շատ օրինակներ կարելի է բերել», ասում է «Ջարեմ Վաստոկան» (27 փետր.): Մեքենաների սարքաւորումը չանջ է ստել, որովհետև Գիպրոսիմը յատակաքերը չի ուղարկել: Պակասում է շինանիւթ — մետակ, խողովակներ, փայտակեր: «Ահա ցիւանմիրսի վտառանները բաժինը — գործարանի հիմնական մասը. շինութեան 80%ը վերջացած է, բայց փայտ չկայ կտուրը ծածկելու համար, և ահապէն շէնքը իր մերկ մարմնով՝ որբայած վեր է ցցած. կամ, ահա, կողքին, կարբիտը ստացնելու մասը, անուրի պահեստը և այլն — նոյնպէս անընդհատ մարմին՝ կտուր չկայ»: Չեն ծածկւած և ուրիշ բաժիններ: Մեքենաները հասաքելու համար բերւած 100 մանադէտ բանւորները նստած են անգործ — նիւթ չկայ: «Նիւթ մինչև մարտ 1—5 նիւթ չստանանք, ինչնիւրեքիթանք», սպառնում է նրանց պետը: «Եւ նա իրաւունք ունի. առ 1 փետրարի նրանք պէտք է պատրաստէին ու սարքէին 260 տոն մետաղի շինանքը, մինչդեռ առ 10 փետր. լրացրել էին ստիկ 75 տոն, և միայն 50 տոն երկաթեղէն էր մնացել»:

Շատ խեղճ դրութեան մէջ է և գործարանի ջրանցքի, կոլիւշու և վտառանների վիճակը — կատարած է հարկը 5—7%ը. նիւթեր չեն ստացուում թիթիլիսից: Ամբողջ շինարարութիւնը աւարտելու համար հարկաւոր է 240 տոն մետաղ, 160 տոն խողովակ, 6 կիլոմետր լար և 400 փոր. մետր փայտեղէն...

Նոյնքան ողբալի է և գործարանի երկաթուղային ճիւղի վիճակը. 6 կիլոմետր երկաթաձից ստացւած է միայն 1 1/2 կիլ. մ'Անցած 4350 տոն երկաթաքերի ճակատագրեր ծածկւած է կատարեալ անբարութեամբ, մինչդեռ գործարանը առանց երկաթուղու, չի կարող բանիլ»:

Եւ սա դեռ Բիմշինն է, որ «Կոմկուսի Անդրկովկասեան Կենտր. կողմից ճանաչւած է հարաժամային» և «համապատասխանապէս նշանակութիւն ունեցող», «Անդրկովկասի զիմիական արդիւնաբերութեան առաջին հնգամեակի գաւազը»: («Ջ. Վ.», 27 փետր.):

Այդ «գաւազի» ծնունդը «կախուած է զինարարական կենտրոնից»։ «Քի սեփական միջոցներով Անդրկովկասը չի կարող բարձրացնել այդ շինարարութիւնը», յայտնել է ընկ. Պիշինաճէն։

Բիմշինից յետ չի մնում և Յեմշինը, որ «կուսակցական վերադաս օրգանների որոմամբ պէտք է գործարարի այս տարւոյ առաջին եռամսեակում»։ Գործարանի այս կաւար շէնքը արդէն կանգնեցւած է, բայց սարքաւորումն ու մեքենայները պատրաստ չեն. հնչոյն իսկ մի շարք անհրաժեշտ մեքենաներ, ստանց որոնց հնարաւոր չէ Յեմշինի գործարկումը, Սոյիւզցեմենտի պլաններում 32 թւի ընթացքում նախատեսւած չեն եղել. «Վորացի են» նախատեսել: Այսպէս, օրինակ, 32 թւին չեն ստացելու 500 ձիու ուժանոց 4 երկտրոմոտոր, 130 ձիու ուժանոց 2 մոտոր, մինչև 130 ձիու ուժանոց 10 մոտոր և մի շարք կարեւր երկտրական ու մեքենայական այլ սարքաւորումներ, առանց որոնց ոչ մի կերպ հնարաւոր չէ Յեմշինը ժամանակին գործարկել: 32 թւի պլաններում «Վորացի» են նաև ջրի խողովակներն ընդհանրապէս: Իսկ մի շարք մեքենաներ, որոնք պակաս կարևոր չեն քան երկտրոմոտորները, Սոյիւզցեմենտի պլանով Յեմշինի պէտք է յատկացնեն միայն 32 թւականի 3րդ և 4րդ եռամսեակներում... Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ Սոյիւզցեմենտն իր անպակաս աշխատանքի շնորհիւ, չնայած կուսակցական վերադաս օրգանների որոշման, վտանգի տակ է դնում Յեմշինի գործարկումը ոչ միայն 32թ. առաջին եռամսեակում, այլ և 3րդ եռամսեակում, թէև գործարանի կառուցման աշխատանքի 85 տոկոսից ակելին կատարած է»:

Ուղարկւած մեքենասարքաւորումն էլ մինչև տեղ է հասնում, մարդկանց թիցը-բերնից է հանում: Օրինակ, «Յեմշինի հրեհաշէլ խմբի սարքաւորման որոշ մասեր և անհրաժեշտ գործիքներ Սոյիւզցեմենտը փոխանակ ուղարկելու Դաւալու կայարանի հասցով՝ սուղարկել է Ալեքսի կայարանի (Բազրի մօտ) հասցէով»։ Մեքենաների և երկտրասարքաւորման մեծ կարեւր է հետ միասին Յեմշինը պէտք ունի 78 տոն երկաթի, 80 փաւոն անտոնանիթի, 400 խոր. մետր սուլֆի, մեծ քանակութեամբ աւազի և այլն: «Վերոյիշեալ շինանիւթերի բացակայութեան հետևանքով փաստօրէն կանգ են առել բետոնի աշխատանքները, իսկ նոյն ժամանակ «Յեմշինի զերեկցիան թոյլատրել է որպէս վտակափայտ գործածելու երեք վառելիք ակելի շինանիւթ (սախտակ)», երբ, միւս կողմից, սախտակ չիկնելու պատճառով, Յեմշինում «քնակարանային շինարարութիւնը կատարել է միայն 30 տոկոսով»: («ՈՒ. 2», 27 փետրար):

Ինչո՞վ բացատրել «կենտրոնի» այս անտարբեր և անփոյթ վերաբերումը դէպի Հայաստանի շինարարական ձեռնարկները: Ի՞նչ է պատճառը, որ շինարարական բոլոր խոշոր գործերը հանդիպում են «կենտրոնի» կողմից «բիւրոկրատական անպատասխանատու վերաբերմունքի» ու «աւարտանքի»: Ինչո՞ւն Հայաստանին յատկացւած վարկերը բաց են թողնուում խոշոր «թեթակաւարումներով»:

Դժբախտաբար, միայն «կենտրոնը» չէ «անտարբեր» ու «անփոյթ»։ ակելի բարեխիղճ չեն և Հայաստանի ներկայ վարիչները: Այսպէս, Հայտողկոմխորհի նախագահի սեղակալ Կուրաշև վկայում է թէ, «մեքենաներ թերակատարում ասենք յատկացւած կապիտալները օգտագործելու անպարկիւտ: Մեքենա օգտագործել ենք ժողովրդական տնտեսութեան յատկացւած գումարով միայն 62,6 տոկոսը... Չգալի չափով յետ է մնում երկտրաշինարարութիւնը, որն օգտագործել է յատկացւած գումար միայն 38%ը, յետ է մնում տրանսպորտը՝ օգտագործում 57,9%, յետ է մնում օտարկուկուտուրական հասուածը՝ արողը պահպանութիւնը, լուսաւորութիւնը, որոնք իւրացրել են յատկացւած գումարների 38%ը, կապի քնազաւաւում օգտագործել է



ներգրումներ 39,6%... Արդիւնաբերութեան ասպարիւրում էլ օգտագործել է ներդրումներ 80%ը, դեղատնտեսութեան մէջ, Զրատնտեսութեան հետ միասին՝ 70%օրը: (ՁՊ՝ 2, 2, 2 փետր.):

Ի՞նչ է իրական պատճառը այս «թերակատարման». միայն երեսնացորեքի անշնորհքութի՛ւնը, թէ նաև «կենտրոնի» փանտրերութիւնը, թէ՛ Երկուսը միասին: Բոլոր դէպքերում էլ սուսողն, ի հակրէ, Հայաստանի տողլղրական տնտեսութիւնն է:

«Կենտրոնի» և Հայաստանի փոխյարաբերութեան ասարկայ կազմող մի խնդիր ևս արձանագրենք — «Սեւանի պրոքլեմը»: Փետր. 21ին ինժինը Յ. Տէր-Ասուածարեանը հետագրում է Մուսկայից, որ Միութենական Հողօգոյկմատի յատուկ յանձնատողովը ընդունել է Սեւանի կոմիտիի ելակոչումը Սեւանի լճի օգտագործման ծրագրի և լճից ջուր անց թողնելու մասին: Նախահաշի տեխնիկական մասը քննելու է էնէրգոցենտրի կողմից՝ փետրվարի վերջին:

Սեւանի օգտագործման ծրագրի մասին մենք արդէն խօսել ենք «Երօշակ»ում: Ինժ. Տէր-Ասուածարեանի հետագրերը ցոյց է տալիս, որ ծրագրերը շուտով դառնալու է իրականութիւն: Իսկ այդ նշանակում է, որ Սեւանի ջրի մեծ մասը խլելու է Հայաստանից յօգուտ Ազրբեջանի ու Վրաստանի: Լճի մակերեսը փոքրաքանակ է մօտ մէկ երրորդով և ջուրը ծառայելու է, գլխաւորապէս, Ազրբեջանի դաշտերը ոռոգելու և Գանձակին ու Թիֆլիսին երկտրական ոյժ մատակարարելու համար: Որոշ փոփոխութիւններով, պիտի գործադրուի ինժ. Ստիւարտի ցարական ժամանակների ծրագիրը: Այսպիսով, հայ տողլղրից թախանդը պղնձի, քամրակի, սուլֆի, պէտրոլի և ուրիշ շատ հարատուութիւնների վրա աւելցում է և Սեւանը...

Մեր տնտեսութիւնը փակեցը Հայովանուի Կենտկոմի քարտուղարութեան որոշումով Հայաստանի Պրոլետարոնների Առցիլիցայի աշխատանքների մասին (ՁՊ՝ 2, 28 փետր.): «Պրոլետարական դրականութիւնից, բացառում է քարտուղարութիւնը, պահանջում է գեղարեւտականօրէն վերարտադրել քանուր դասակարգի հերոսական պայքարը սոցիալիզմի կառուցման, դասակարգային պայքարի ֆրոնտում, սուլ հնդամեակի հերոսների դէմը դրականութեան մէջ, կերտել բոլշեւիզի մեծ արեւտը», արտադրել «մեր էպոսային քառանի ստեղծագործութիւններ»:

Ինչպէ՛ս է կատարում Հայաստանի դրականութիւնն այս պաշտօնը — «Հնգամեակի հերոսների ցուգազրման, սոցիալիստական շինարարութեան ակտուալ խնդիրները գեղարեւտօրէն վերարտադրելու բնագաւառում, պատասխանել է քարտուղարութիւնը, Ասոցիացիայի աշխատանքները հետո են քաւարար լինելուց: Պրոլետարական դրականութիւնը Հայաստանում քի արտադրանքով դեռ ևս չափազանց յետ է մնում սոցիալիստական շինարարութեան բայլչեկիկան տեմպից: Պրոլետարականութիւնը՝ դեռ մինչև այժմ չի կարողացել գեղարեւտականօրէն արտադրել մեր պայքարն ու շինարարութիւնն իր ամբողջ ծաւալով և խորութեամբ»:

Բացի այդ, Ասոցիացիան և նրա օրդան «Գրական Իրիբերում»ի խմբագրութիւնը «Քննամի գաղափարախօսութեան դէմ մղող պայքարում կատարել են ալ ու հօստ» քնոյթի բաղաքակի կոպիտ սխալները: «Որոհհրդային Հայաստան»ը բերում է մի քանի նմոյշներ այդ «կոպիտ սխալներից»: «Միթէ՛ փաստ է՞, որ «Գրական Իրիբերում»ի խմբագրութիւնը դեռ մինչև օրս էլ բայլչեկիկան վճռական հակահարած չի աւել իր իսկ ամապարի էջերում հրատարակում Հ. Յարութիւնեանի բացարձակ մենչեկիկան յօդուածին, ինչպս՝ կենտրոնական օրգանի իր ժամանակին տաւձ աւազանօրին, յայտնաբերելով նեխած լիբերալիզմի ցայտուն քրիսակ: Մի՛թէ՛ փաստեր չեն գրական ֆրոնտի դեկաւարներից մի քանիսի կոպիտ լիտֆրոնտովեան, վո-

րոնսկիական-պերեկրեղեկական») սխալները 1930 թի գիւղաւտի և հետագայ շրջանում: Մի՛թէ՛ փաստ չեն, որ ալ օպորտունիզմի արտայայտութիւնները — Ալաքանի «Կառուցման Երգեր»ում, Նորենցի «Երկրորդ Գիրքը» և այլ գրքերում, «ձախ» խտորումները Զարեանի, Արաքսի ստանձին ստեղծագործութիւններում չեն ստացել բաւարար հակահարած: Փաստ է՞՞ միթէ՛, որ ընկ. Վանանդեցու, ինչպէս և ընկ. Հ. Միկոյանի պերեկրեղեկական սխալները մի շարք յօդուածներում, ընկ. Գիւրեթեոյիկանի պերեկրեղեկական սխալները և այլն, մինչև օրս էլ չեն դարձել բայլչեկիկան կոնկրետ քննադատութեան առարկա»:

էլ տակը ի՞նչ է մնում, երբ Գիւրեթեոյիկանի ու Վանանդեցու պէս ուղղափառ մարքսիստ-լենինիստներ «անթոյլատրելի» ու «կոպիտ սխալներ» են կատարում ու չեն ըմբռնում գրական ստալինիզմի «ընդհանրական դիմը»:

Հայաստանի դրականութեան միւս հիանդութիւնը, ըստ Կենտկոմի քարտուղարութեան, ներքին թալփաշականութիւնն է. «Ձնայած ՀԿԿ Կենտկոմի և մի շարք որոշումներին ՀՊԳԿ դեկաւարութիւնը վճռականապէս մեծամուխ չի եղել անսկզունը խմբակայնութեան արմատախիւ անելու գործին: Այդ փակ պատճառով, գրական ստեղծագործական սկզբունքային վէճերը յաճախ իրենց վրա կրել են խմբակայնութեան կնիք և պրոլետարոնների ուշադրութիւնը հեռացրել են ստեղծագործական լուրջ խնդիրներից ու դասակարգային թիւնու դէմ մղող մաւրումն պայքարից»:

Կատարել են և ուրիշ «անթոյլատրելի սխալներ». «Յատկապէս անգոհացուցիչ են ուղեկիցներ շերտաւորման աշխատանքները. այս առարկայում աւանձնապէս նկատելի է դարձնադատութեան անբաւարար վիճակն ուղեկից, դաշնային գորղների ստեղծագործութիւնների արժեքաւորման և գնահատման ասպարիզում»:

Ի՞նչ գորման է գտել Կոմկուրը Հայաստանի դրականութեան հիւանդութիւնը բժշկելու համար: Նախ՝ նա փոփոխութիւն է կատարել Հ.Պր.Գր.Ասոցիացիայի ղեկավար մարմիններում: ապա՝ որոշել է «ՀԿԿ Ասոցիացիայի և Գրողների Ճեղքբացիայի ստեղծագործական հիմնական կարբերիկն ապտունը դանապա աշխատանքներից և հիմնականում ամբայնել գրական ստեղծագործութեան աշխատանքը»: Հրահանգել է «ընթերցող մասաներին համարումը «Գրական Իրիբերում»ի շուրջ, «Ասոցիացիային կնից կազմել դրական յատուկ կարինետ և կոնսուլտացիա՝ հարաւածային գորղների համար»: Հրամայել է պրոլետարոններին «խախտելու պայքար ծաւալելով պերեկրեղեկականութեան, վրոնսկիականութեան, լիտֆրոնտականութեան դէմ, Իանակցութեան, բուրժուական նացիոնալիզմի ազդեցութիւնները ու այլ արտայայտութիւնների դէմ՝ աւելի ամուր հիմքերի վրա դնել «Գրական Իրիբերում»ի քննադատական և դրասուական բաժինը»: Կարգադրել է «Օդտագործելով Հ.Պ.Ա.Պ.Պի և Ռ.Ա.Պ.Պի»՝ փորձը անցնել դրական-ստեղծագործական խորհրդակցութիւնների կազմակերպման» և «պրոլետարական ողջ սկիւրի ուշադրութիւնը մորիիցացիային ենթարկել հնգամեակի հերոսների, սոցիալիստական շինարարութեան գեղարեւտական վերարտադրման, բայլչեկիզմի մեծ արեւտը»:

Դժուար չէ երեսակայնի թէ Աղաթի Մանվեանի այս հանձնարել միջոցները ի՞նչ հրաշագեղ յեղաշրջում առաջ պիտի բերեն և ի՞նչ նոր դարապուլուս պիտի բանան Հայաստանի դրականութեան մէջ:

\*) Բոլշեկիկան քեփումներ ռուս գրական ֆննդատուութեան մէջ:

\*\*) Ռուսական պրոլետարական կազմակերպութիւններ:

# Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Անցեալ փետրուար 19ին, մասնաւորապէս Պոլսոյ և Էնկերլիի և ընդհանրապէս Թուրքիոյ բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ տեղի ունեցաւ Հանդիսաւոր բացումը «Ուալք Էլիֆէն»երու: (հառաքի իմաստն է՝ «Ժողովուրդի տուն»): Բայց կապած ըլլալով կուսակցութեան (Ուալք) հետ, կը նշանակէ այդ կուսակցութեան տունը: Ինչպէս ելիք ըսէինք՝ «Իշխանակցութեան տուն»:

Ընթերցողներուն ծանօթ է որ, Մ. Քեմալ անցեալ տարի ջնջել «Թուրք Օլախները», զանոնք լուծելով էր կուսակցութեան մէջ: Այդ կարգադրութեամբ ալ, Թրքական Օլախներու բոլոր ակումբներն ու շարժուն և անշարժ գոյքերը դարձան «Ուալք»ի սեփականութեան:

Հաստատուած՝ 1912ին, Թրքական Օլախները կը համբերին 300,000 անդամ, 280 մասնաճիւղերով և մեծագումար կտրուութեամբ: Կեդր. վարչութեան տարեկան երկտասնոցը հասած էր կէս միլիոն ոսկիի, իսկ տեղական մասնաճիւղեր ունէին 25,000էն 45,000 ոսկի երկտասնոց, համաձայն իրենց կարողութեան:

Օլախները՝ արգախին մշակոյթը զարգացնելու պատրաստակին տակ, համաթրքական-թուրանական բոլորներ էին, Իթթիհատի օրով: Այդպէս ալ շարունակեցաւ մինչև զէմալական իշխանապետութիւնը, որ քանի մը տարի առաջ «բարեփոխեց» անոր հիմնական կէտերը:— այն որ թուրանականութիւն կը բուրժը, հաճուցը պատճառելու համար իր կարծիք հարեւանին. իսկ 1931ի դարձան բոլորը մէկ լուծել «Ուալք» կուսակցութեան մէջ, հետևողութեամբ Մուսալիմի:— «Արտաքին և ներքին վրանդներուն դէմ, երկրի և յեղափոխութեան փրկութեան համար, անհրաժեշտ է համախմբել ազգայնական և հանրապետական բոլոր ուժերը: Հետևաբար, յարմար դատեցի որ Թրքական Օլախները, որոնք իրենց հիմնադրութեան թևակոսէն սկսեալ հասարակօրէն ու հաստատով աշխատեցան ազգայնական և ռամկավարական մարզին մէջ, և որոնք այս ճամբուն վրա գոհացուցիչ արդիւնքներ տւին, շարունակեն իրենց աշխատանքները բառին կատարեալ իմաստով, մէկ մարմին կազմելով իմ կուսակցութեան հետ, որ պիտի իրականացնէ նոյն սկզբունքները դործնական և քաղաքական ասպարէզին մէջ»:

Այս հրամանը կատարելու, միացուցը գլուխ հանելու համար, «Ուալք»ի վարչական խորհուրդը շորս ամիս տքնած է; 30 նիստ, ճիշտ 150 ժամ խորհրդակցած է, ինչպէս յաքարարեց ընդհ. քարտուղարը: Այդ խորհրդակցութեանց առաջին արդիւնքն է՝ «Ուալք Էլիֆէն»երու հաստատումը:

Արդ, այս վերահրուած օլախներու, «Ուալք»ի Տուններու բացումն էր որ Հանդիսաւորապէս կատարեցաւ փետր. 19ին: Պոլսոյ հանդէսին ներկայ էր Ըսմէթ փաշա, որ գոյն ու ջերմութիւն կուտար ճառերուն և երգերուն: Սրահը կը թնդար Հանրապետութեան օրհներգով:

— Է՛յ թուրք ազգ. Բաւ առաջին պարտականութիւնը է պահպանել իրփրկան անկախութիւնը, քրքական անարապետութիւնը՝ ցկատարած աշխարհի: Պահպանի և քարճարանիլ գայն»:

Բացման ճառէն յետոյ, աղջիկ մը արտասանեց բանաստեղծ Եուսուֆ Չիւա պէշի մէկ ոտանաւորը, «Ուալք Տունըը բացած աստի...»: Քանի մը հատուաններ, սապացուցանելու համար թէ ի՛նչ ուղղութեամբ կը խմորւի և կը զարգանայ արդի թուրք երիտասարդութիւնը, իրականութեան ինչպէս գրականութեան մէջ:—

— «Կազին իր ճարտարունակող գրքին մէջ կրտէ թուրք երիտասարդութեան, — Հանրապետութիւն, անկախութիւն, բոլորը ձեղի աւանդ: Է՛յ թուրք երիտասարդ, ջու մէկ կաթիլ արեւնիդ մէջ կայծակ մը կահուած է. այդ աւանդին համար պիտի ըլլայ ջու սրված գիտութիւնդ. այդ աւանդը պահել՝ ջու պարտականութիւնդ»:— Այս ճայնը՝ ոչինչէն՝ Հայրենիք մը ստեղծողին ճայնն է. տասնըչորս միլիոն բերնով Հայրենիքի մը ճայնն է: Հայրենիք ըսել՝ ան ըսել է. ան ըսել՝ Հայրենիք ըսել է: Յեղափոխութիւնն ստեղծողը Հայրենիքն ստեղծողն է: Ա՛ն փրկեց այս բոյնը ներքին և արտաքին թշնամիների... Անկէ յիսած ամէն մէկ հրաման արեւն ըսած նոս մը է. իսկ այդ նետերուն առջև կը փրկն, կը հալին լեռ, քար ու երկաթ... Ան մէկ-մէկ հասաքելով «ժողովուրդին ճիւղերը» մեծ ապագայի մը հիմքերը կը դնէ... Ուալք Տունը ազգին հարգատար տունն է. իսկ գայն տաքնողը՝ երիտասարդութեան բոյը: Այս տունները ամէն սրտի մէջ պիտի բանեցնեն յեղափոխութիւնը, անոր վեր պատուհաններէն լոյս պիտի ծագի\*): Գիտութիւն և արհեստ պիտի ծնին այս տան օրօրանքս. խաւարը ներս չպիտի մտնէ այս տան սեմէն: Մուրճը, արօրը, ստղը... Գրիչը, սուրը, կուրճը, դուրը ընկեր պիտի ըլլան այս երգիքին տակ: Այս տունները պիտի տեսնն որքան տեսէ աշխարհը, որքան ասուն որ մէկ հատիկ թուրքի մը սիրտը բարսիտէ երկրի վրա»:

Մենք թարգմանեցինք նախադասութեանց իմաստը: Իբրև թուրքերէն ոտանաւոր, այնքան մատչելի լեզով, իսկապէս որ Թարթաւուն տպաւորութիւն մը կը ձգէ այս բանաստեղծութիւնը, ինչպէս այնքան ուրիշներ որ լոյս կը տեսնեն 1908էն ի վեր, բայց մասնաւոր զէմալապետութեան օրով և անոր ներշնչումով:

Այս առթիւ խաւար ճառերն ալ, Պոլսէն մինչև Պիթիլիս, տողերուց էին միևնոյն ոգիով, — թրքութիւն, յեղափոխութիւն, անկախութիւն, Հանրապետութիւն: Ինկիլը շարժման մէջ դրած էր իր բոլոր ճարտասանները, որպէսզի կայծեր ցաննն թուրք երիտասարդութեան սրտին ու մտքին մէջ, վարակեն, վաստեն իրանց օրսն իշխանութեան փտակերով և գալիք յաղթանակներով:

\* \* \*

Ի՛նչ կը տրամադրէ Ուալքի ծրագիրը, Հիմա որ երիտասարդութիւնն ալ կապեց իր շարժանիւնին, և տարամեթօրէն տէրն է ամբողջ կացութեան, թէ քաղաքականութեան, թէ տնտեսական կեանքի և թէ մշակութիւն մէջ:

1931 մայիս 12ին ընդունեցաւ կուսակցութեան նոր ծրագիրը, որ կը բաղկանայ ութ հիմնական գլուխներէ, և կընթարէ պետական կազմակերպութեան մը բոլոր տարիքը:

Առաջին գլուխին առաջին յօդուածն է «Հայրենիքը», որ կը համարուի այսօրսն թուրքիան, և որ անբաժանելի է բացարձակապէս: Երկրորդ գլուխը՝ «ազգ», հետեւեալ հասկացողութեամբ:— «Լեզու, մշակոյթի և իտէալի միութեանը իրարու կապած Հայրենակիցն»:

\*) Խալիֆ Տուճմուրտ մշակոյթի ծրագիրը կը բաղկանայ ինը կէտերով, — 1. Լեզու, գրականութիւն, պատմութիւն. 2. Գեղարվեստ. 3. Բալլադայնական կերպարներ. 4. Մարզամբ. 5. Ընկերային օգնութիւն. 6. Ժողովրդային դաստիարակ. 7. Գրատուն և կրատարակութիւններ. 8. Գիւղացիներու բաժին. 9. Թմնագրան և ցուցահանդէս:

րու քաղաքական և ընկերային մարմինը: Երրորդը՝ «Պետութեան հիմնական կազմակերպութիւնը» — որ այսօրեան վարչաձևն է: Կուսակցութիւնը երկրորդ յօդուածով իրեն համար հիմնական սիդրուններ կը համարէ 1. Հանրապետութիւնը: 2. Ազգութիւնը: 3. Ժողովրդապետութիւնը: 4. Պետականութիւնը: 5. Աշխարհականութիւնը: 6. Յեղափոխութիւնը:

Ի հարկէ, ստոյգ ընդհանուր խօսքեր են և կրնան առանց դժարութեան տեղաւորուիլ ո՛ր և է ծրարքի մէջ:

Մեզի համար բուն հարցը այն է թէ ի՞նչ վարչ-ներք ի՞նչպէս կը հասկնան այս վերացական բացատրութիւնները: Ի՞նչպէս կը թարգմանեն և կը դարձադրեն գանձը:

1931 հոկտեմբեր 16ին, ինչքէ ընդհ. քարտուղար Բէճէպ պէյ Պոլիս այցելեց և վիճարանական փոքր մը սարքեց համալսարանին մէջ: Պոլիս հայերէն թերթերը հազիւ բարեհաճեցան լուրը տալ, իսկ թուրք լրագրիները էջերով մանրամասնութիւններ հրատարակեցին այդ վիճարանութեան, և մասնաւորապէս Բէճէպ պէյի բացատրական բանախօսութեան մասին: (Միայն «Միլլիէթ» երեք էջ): Նոր թուրքերի ընկերային և քաղաքական հոլովման մէկ խտացած պատկերն է այդ ճառը, որ կը շօշափէ բոլոր խնդիրները, պետական կազմակերպութեան մինչև անտեսակարար, ակնարկ մը կը նետէ սահմանէն դուրս գտնուած թրքութեան մասին ալ, և նկատի կ'առնէ նաև փոքրամասնութիւններու խնդիրը: Մեզ հետաքրքրողը, ի հարկէ այս վերջին կէտն է: Բայց կարծէ ակնարկ մը նետել նաև քանի մը կարևոր կէտերու վրա:

Վիճարանութեան ընթացքին, ունկնդիր մը գարձանջով հարց տուաւ թէ կուսակցութիւնը դրամապուրի մէջ անգամ ազգութեան հարց կը դնէ: «Մենք պէտք ունե՞նք օտար դրամապուրի»:—

Բէճէպ:— Բնականօրէն դրամապուրիին միակ աղբիւրը ազգային ճիշդ ու խնայողութիւնն է: Յարգանքով կընդունինք այն դրամապուրի որ օրինակաւ պիտի դործէ. բայց կը մերժենք ճնշիչ դրամապուրի: Թուրքիան գաղթաբազար է: Մենք մեր ազգային անկախութիւնն ալ պիտի պահպանենք»:

Կոչակար մը հարցուց թէ ինչո՞ւ այսքան կուշառն թանկութեան օրէնքը:

Բէճէպ:— Մենք մեր ծրարքին մէջ կը խոստանանք ներքաշնակութիւն հաստատել աշխատանքին և դրամապուրիին միջև, և բանտարական օրէնք մը պատրաստել: Բայց պէտք է դիտուիլ որ շատ մեծ գործ է այդ օրէնքը: Երկար ժամանակ և ծանր աշխատանք կը պահանջէ: Ամենէն մեծ պետութիւններն իսկ տակաւին չեն կրցած դուրս հանել իրենց երկրի պահանջներուն համապատասխանող բանտարական օրէնք մը: Բայց և այնպէս, մենք այդ ալ պիտի ընենք»:

Ինչպէս կը տեսնէք, ազխութիւնն ու մեծամասնութիւնը պար ընունք են այս յայտարարութեան մէջ:

Բայց, թուրքերը խորհրդածութիւնները և անցնինք բուն հարցին, — ինչքէ ազգային քաղաքականութեան, այնպէս ինչպէս կը բացատրէ կուսակցութեան ընդհ. քարտուղարը:

Ինչքէ ընդամայն փարբելով ազգային դադափարին և ընդունելով բոլոր ազգերու հետ ներդաշնակ ընթացանալու տեսակէտը, իբրև աղիտարբի, խտորէն կը մերժէ միջազգայնութեան հոսանքները, քո՛ր կողմէն ալ գան և ի՞նչ հանգամանք ալ ունենան: Այս մտահոլութիւնը ալ, ծրարքը անտեսական մասին մէջ ազգայնութիւնը պայման դրած է բանտարաններուն համար, իսկ կըթակակ մասին մէջ՝ Թուրքիոյ պատմութեան ուսուցումը:

Իսկ ի՞նչպէս կը բանաձևեն իրենց յարաբերութիւնն ու քաղաքականութիւնը՝ Թուրքիայի դուրս եղած Թուրքերու (համաթրքութեան) և Թուրքիոյ մէջ եղած ոչ-Թուրքերու (փոքրամասնութիւններ) մասին:

Կարծէ ամբողջութեամբ թարգմանել բանախօսութեան այդ մասը:—

— «Համաձայն կուսակցութեան սկզբունքներուն, ազգը քաղաքական և ընկերային այն մարմինն է, զոր կարձած են նոյն հայրենիքի դուսակները (վայքամտաւ), իսկ հայրենիքը այն օջախն է, որ ներկայիս սահմանաւած է մեր քաղաքական շրիւթով:

Այս ձևով սահմանել յետոյ աղբ ու հայրենիք, մեր կուսակցութեան ըմբռնած ազգայնականութիւնը որ և է յարաբերութիւն չի ներկայացներ այն գանդաւաններուն հետ, որոնց քաղաքական ճակատադիրը բաժնուած է մերինէն:

Ձերմ սիրով մը տողորուն, կը պահենք ոսկայն մեր յարաբերութիւնը այն Թուրքերուն հետ, որոնք տարբեր կրօնք ունին, մեր հայրենիքին սահմաններէն դուրս, այս ու այն կողմ հան անկարգաբար պետութեան կազմած են կամ ուրիշ պետութեան մը հպատակ դարձած: Սակայն, ինչպէս ցոյց կուտայ պատմութիւնը, թուպէս մեծ այդ գանգաւաններուն հետ արեւակազական և պատմական մեր մօտիկութիւնով գրադիրը դուրս կը համարենք մեր քաղաքական գործունէութեանէն:

Դարձեալ գանք մեր սահմանումներուն: Մեր ծրարքին մէջ յօդուածով մը գրուած է:—ազգը՝ լեզու, մշակութիւն և խելայի միութեամբ իրարու կապուած մարդոց բազմութիւնն է: Թէ որքան կարեւոր է լեզու միութեանը ազգութեան դադափարին մէջ, որոշ է: Մշակութիւն միութիւնը կը նշանակէ կապով անցեալին, հարուստ և հասարակաց յիշատակներու ժառանգութեան մը աճը ըլլալ, պատմութեան դատն և անուշ օրերը միասին ապրած: Նոյն յոյսերուն կապուած, մեծագործութիւնները միասին կատարած, մեծ դժարութիւնները միասին հարթած:

Ասկից գատ, մեր ճիշտ փմաստովը ազգութեան դադափարը ամբողջացնելու համար, պէտք է աւելցնել թէ միասին ապրելու համար անհրաժեշտ է նոյն ցանկութիւնը և նոյն անկեղծ համեմատութիւնը, և ժառանգութեան պահպանման համար նոյն և հասարակաց դժողութիւնները:

Այս բացատրութիւններուն օգուտը ցոյց տալու համար, մեր խօսքերը տեսականութեան հանելով պատշաճեցնենք ներկայ թուրք ազգին բաղկացուցիչ տարրերուն, հայրենակիցներու գանդաւանի վրա:

Ներկայ թուրք ազգը ընկերային ու քաղաքական այն հաւաքականութիւնն է, որուն անդաւանները թէեւ իրենց իրենց կուստան ջերբոս, չէրքէ, նոյն իսկ յոյգ կամ փոմաք անունները, բայց մեր հայրենակիցները կը համարին:

Անցեալի մութ բունպետական շրջանէն մնացած ժառանգութիւն մըն է այդ, պատմական երկար յեղաշրջումներու հետեանք, որ սխալ ըմբռնած է, և մեր պարտականութիւնն է անկեղծօրէն սրբաբարել ու շտկել այդ սխալ ըմբռնումները: Արդի դիտական ճշմարտութիւնները կարելիութեան ցոյց չեն տար ազգութիւն մը երևակայիլ, որ բաղկացած ըլլալ նոր-տասար հազար, քանի մը հարիւր հազար, նոյն իսկ մէկ միլիոն բազմութեան մը:

Մեր ազգակիցներուն մասին կապը զոր կը գգանք բոլորովին տարբեր է կործանած Օսմանեան կուսակցութեան «հիմնէթ» քաղաքականութեան: Այդ հարցը մենք պարզ ազգային քաղաքական ձևով կընդունինք:

Գրեւտոնեայ և հրեայ հայրենակիցներու մասին և մեր խօսքը նոյնքան բաց և յստակ է: Մեր կուսակցութիւնը այս հայրենակիցներն ալ, ինչպէս քիչ առաջ բացատրեցինք, լեզու և խելայի միութեան նշանաբանն տակ, թուրք կը համարէ: Անկուրդ է ըսել թէ մեր այս ըմբռնումը բոլորովին տարբեր է բունպետութեան շրջաններու քայլա բացատրութեանէն:

Ասկից գատ, մեր այս անկեղծ խօսքերը երբեք չեն նմանի Օսմանեան կայսրութեան վերջին տարիներու սահմանադրութեան աղմուկին մէջ ծնունդ առած ար-

հետապահան և կեղծ հայրենակցութեան : Անոնք ուրիշ իմաստ չունին, բայց միայն այն որ համերաշխ են մեր սկզբունքներուն հետք :

Ըստէ՞ք փառան անգամ յուսահատած կը թիւ տընտեսական-եւրոպական սուպնապէն, որ սաստկագոյն աստիճանին հասած է : Բոլորովին անհիմն չէր հրաժարման լուրը, որ մինչև հիմա կը գաղտնիէ մամուլը :

Անցեալ տարան ելմտացոյցը նախատեսած էր 186 միլիոն սակի : Երևան եկաւ որ ոչ իսկ 146 միլիոն գոյացած է, և հիմա գլուխները քարին կը գործեն, նոր կ'մտացոյցը 150 միլիոնի վրա կ'աղկալու համար : Ամենէն բաւատենքն ալ քաշած են փրենց լեզուն, կամ էլ թեր կը փնտռեն վախկոտ առաջարկներով :

Բայց ո՞րն է ելքը :— Նոր տուրքեր :— Մարդիկ բանտ կերթան, շղիմանալով տուրքերու ծանրութեան : Ժողովուրդին վճարելու, սպասելու կարողութիւնը նոր փորձելու է զիմանար այլ ևս : Փոխառութիւն :— Եւրոպան սանթիմ չի տար, ստանց սպահովելու Հանրային Պարտքի տոկոսներուն զանձումը : Սարածողուն երկրորդ անգամ եկա Փարիզ, աջձար ինկաւ, ու մինչ կը պտտրատուէր կրկին Ամերիկա երթալու, վերադարձաւ Ինկիլիթի, նախ Հանրային Պարտքի թնձուկը լուծելու համար :

Մին կողմէ անտուրը կանգ առած է, շնորհիւ ներածումներու դէմ դրած սահմանափակումներուն : Ապրուստը սկսած է Մուրքը, շաքարը, թէյը, բրինձը, քարիչը, կիպանդիները և ուրիշ սպահանքն կրակի դիններով կը ծախին, ներածումները անսական չափերու վերածուած ըլլալով : Մնանութիւնները իբրտու կը յաջողեն : Նաւանագութիւնը կանգ առած է : Մաքսատունները ճանձ կորսան : Ցամբած են եկամուտի ընկան ազդիւնները : Ժողովուրդին 70% է հողագործ է, բայց հողագործութիւնն ալ ծանր տապալաւ մը կանցրէ :

Բայց աւելի լաւ է խօսիլ իրենց բերնով : Այս միջոցին ամբողջ թուրք մամուլը ողբ ու կոծի մէջ է, ինչպէս 1930ին, երբ մէթիզի պէյը օգնութեան կանչեցին :

Քէմալական «Միլիտէթն» է որ կը դրէ, իր իմրազբապետին, Սղերդի երեսփոխան Մահմուտ պէյի ստորագրութեամբ :

— Ըներկալան ելմտացոյցի խնդիրը զլիսուոր մտահոգութիւնը կը կազմէ Ազգ. Մեծ Ժողովին, կուսակցութեան և կառավարութեան : Չարիքին դարմանը գտնելու համար, ձեռնհաս չըմբանկները սկսան փնտռել հատոյթներու դուլեխին մէջ երևան եկած քանի մը միլիոն բացի պատճառները : Եւ հաստատեցին թէ զլիսուոր պատճառը Ժողովուրդին գնելու կարողութեան նաւագումն է : Եթէ դարմաններ չգտնեն պատճէ ժամուն, կացութիւնը կրնայ աւելի վատթարանալ : Ժողովուրդին 70% է կը բաղկանայ հողագործներէ որոնք միայն հողին արտադրութեամբ կ'ապրեն : Անոնց գնելու և վճարելու կարողութիւնը կ'ախոսւմ ունի միայն իրենց բերքին վաճառման շահէն : Ամէն մարդ գիտէ որ հողային արտադրութեանը գինները ինկած են բոլոր հրապարակներուն վրա : Անոնք այլ ևս չեն գոցեր արժեքներ : Փիներու այս անկումը ոչ միայն կարօտութեան կը մատնէ գիւղացին, այլ և կը վճատեցնէ, կը ստիպէ լքել հողագործութիւնը : Հետևանքը կ'ըլլայ աղէտ, — արտադրութիւնը կը դադար և մեքէ կը հարկադրուիք արտասահմանէն ներածել մեր ամէնօրեայ հացը : Կառավարելը՝ նախատեսել է :

«Ենէնի կիւն» աւելի բացորոշ կը խօսի, նախ արտատալով յերկրագործական Սենեակի նախագահ Բաշտ պէյի հետեւեալ յայտարարութիւնները :

— «Յորինք կը ծախել այնպիսի վար գնով մը որ չի կրնար գոցել նոյն իսկ իր ծախսերը : Ոտք չէ այս, ճմարտութիւնն է որ կրնա : Ամէն մարդ թող համոզ-

ւի որ գալ տարի ցորենի ցանքը չափազանց պիտի նւագի : Այս կացութեան առջև, անսպասելի չէ սովը և հացի գինին անհաստատի քարձրացումը : Հողագործները, այս տագնապին պատճառով, ստիպուած են ծախել իրենց արտերը : Մէկ արտավար հողը ներկայիս կը ծախել 3-4 սակի, այսինքն 10 օխա մածունի գնով : Յորինք մեր տագնապը երբեք կապ չունի համաշխարհային տագնապին հետ : Մեր գիւղացիները մատնուած են հողեկան անձկութեան մը և այնքան յուսահատուած են որ, հեղահեղ կը հրաժարին ցորեն ցանելի և կը ծախեն իրենց արտերը, ինչպէս ըսինք» (7 մարտ) :

Իսկ «Ճիւմհուրիէթ» իմրազբապետը, հռչակաւոր Եօնուս Նատին կարդալիէ :

— «Թուրքիոյ մէջ Հողագործը իսկապէս օգնութեան կարօտ վիճակի մը հասած է : Հակառակ անոր որ բոլոր պարսններու գինները բարձրացած են, ցորենի օխան հնդգ դուրէ (նիք) — գիւղացիները կը ծախէ 2-3 դրուշի կարծէ : Կրնայ պատուաւի որ այս կացութեան առջև օր մը չկարենանք ցանիլ մեր ցորենը : Այդ պարագան իսկական աղէտ մը պիտի ըլլայ այս հայրենիքին, որ մասնաւորապէս Հողագործական երկիր է» :

Եւ խելօք Գուշիքը կառաջարկէ աւելցնել հացին գինը Պոլսոյ մէջ, տարին 50-70 միլիոն սակի սպահանդելու համար, «որուն կէտ գիւղացիին զրգանք պիտի մտնէ» : Չարդարար Ապտուլ Ռայիքը, որ ելմտական գործավար է, ամենէն առաջ խնդաց իր բարեկամին այս գիտարին վրա...

Իսկ թերթերը կը շարունակեն ջրբերել խնդիրը, Հարցարաններ բանալով և օգնութիւն աղաղակելով :

Այս իրարանցումին մէջ էր որ, քանի մը անգամ Հրատարակեցաւ և մեղմօրէն հերքեցաւ Ըստէ՞ք փաշայի հրաժարման լուրը :

Բայց միայն ցորենն է որ կը փոխ ամբարանոցներուն մէջ : Նոյնքան սուր տագնապի մը մատնուած է նաև ծխախոտը : «Միլիտէթ» թղթակիցը, որ ծխախոտի հանրածանոթ կեդրոն մը, Պաֆրա զացած էր վերջերս, կը գրէ թէ այս տարի բերքը 2-5 միլիոն է, մինչդեռ անցեալ տարի 3½ միլիոն էր :

— «Ծխախոտը շատ անհիւր կը ծախուի : Տակաւին մթերանոցներու մէջ կը մնան այն ծխախոտները որոսկ չանցին վաճառականները, ստանց կարենալ ձեռքէ հանելու : Գիւղացիները, ծխախոտի մշակները, հողագործները չափազանց աղքատ են և պարտքերու տակ ընկնուած... Ծխախոտի տագնապին մէջ դեր կը խաղան նաև աւետարակային ընկերութիւնները : Ենորճըզ կը կողոպտեն գիւղացին, կէս առ կէս վար կը գնեն սակարկուած գինէն ևն» :

Տագնապին սաստկացումին քանի մը ամիս առաջ, թերթերը գրեցին թէ քէմալագետութիւնը պետական մեծանորճի պիտի վերածէ արտաքին առևտուրը :

Այս լուրը կէս-բերան հերքեցաւ այն ատեն, բայց, բոլոր երևոյթները կը հաստատեն թէ սեղանի վրա է միշտ, իբրև ճարտարաւ միջոց : «Թաւոյի թրքաւոր թղթակիցն ալ կը հաստատէ այս պարագան, և նոր դրութեան գործադրութիւնը կը նախատեսէ յառաջկալ տարան համար, աւելի կործանարար գտնելով զայն :

— «Մեծանորճի վերածել արտաքին առևտուրը և օտար նաւերուն արգիլել թրքական սպահանքերու արտածումը՝ կը նշանակէ փակել բոլոր մեծ առևտրական տունները — տեղական թէ օտար — թրքական շուրքերէն քչիլ օտար նաւերը և բազմապատկել անդրծնեբու թանակ մը որուն ոչ մէկ օգնութիւն կարելի պիտի ըլլայ ընձեռել : Այս բոլորին հետևանքը պիտի ըլլայ նոր արտագաղթ մը, և հասոյթներու նշանակալից նաւում մը» :

Մինչ այս մինչ այն, արտասահմանի թուրք ընդ-

զիմադիր թերթերը կը շարունակեն ամէն ուղղութեամբ վարկարկել զէմալպետութիւնը և խափանել ո՛ր և է արտաքին փոխառութիւն: «La Turquie Libre», փախստական թուրքերու Փարիզի միապետական օրկանը, կաղաքագրէ վերջին խմբագրականով (15 մարտ) .

— «Կուղէինք որ Եւրոպան — և մանաւնդ Ֆրանսան — չամոզէին թէ ղիկտատորական վարչաձեւը չնչասպառ կը հեւայ, թէ միայն սկիներու ուժով է որ կանգուն կը մնայ, թէ մօտալուտ է այն աղէտը որ պիտի ըլլ տանի Քէմալներու և Ըամէթներու կառավարութիւնը... Կուղէինք նաև որ Ֆրանսագիրները վերջապէս չամոզէին թէ այս պայմաններուն մէջ ղրամ փոխ տալ աղօթէն կառավարութեան մը, բիանձ աօրինի ժողովէ մը որ երբեք չի ներկայացնիր թուրք ժողովուրդին բաղձանքները, հակառակ է Ֆրանսացիներու և թուրքերու շահերուն: Հակառակ՝ Ֆրանսայի շահերուն, որովհետև քէմալպետութիւնը հաւատարիմ է և հանցակատար ղինակիցի է ղուլէիզմին»

Անշուշտ, կուսակցական կիրքը և թշնամին տապալած տեսնելու մարմաջը մեծ դեր կը կատարեն այս շարագանց վարդազեղ արտայայտութեանց մէջ: Բայց, այդ բոլորը ղեղելով հանդերձ, անխտեղի կը մնայ անողոք իրականութիւն մը, — թուրքիոյ տնտեսական քաղաքականութեան սնանկութիւնը:

Ըամէթ փաշայի հրաժարման ղրոյններուն առթիւ, զէմալական մամուլը ղիտելու տաւ թէ՛ ո՛վ որ ալ դայ անոր տեղը, չի կրնար փոխել կացութիւնը, քանի որ երկիրը կը կառավարէ համաձայն թալէի քաղաքական և տնտեսական սկզբունքներուն:

Կը նշանակէ թէ անյոյս է ո՛ր և է բարեփոխում, առանց քաղաքական ծրագրի փոփոխութեան: Ուրեմն, զէմալպետութիւնը պիտի յանդի իր բնական վախճանին, հետզհետէ աւելի պրկելով օղակները, փորձելով Փաշական և բուլշիկեան բոլոր մեթոսները, անշուշտ արեւեկեան հարկազոյութեամբ: Թրքավարի:

## ՀՆԳԱՄԵԱԿՂ ԵՒ ՀԱՄԱՇԵՍԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ \*)

Բուլշիկները հնդամայ ծրագրի հիմնական խնդիրներից մէկը «Եւրոպային և Ամերիկային հասնելու անցնելն» է: Արդ՝ առաջին երկու տարւայ ընթացքին, 1928-30 թւականներին, որոնք Հնդամեակի ամենալաջող տարիներն են համարում, որքան՝ կարելի եղաւ երազործել տրանսպատակը: Խորհրդային տնտեսութիւնը ինչքան է նպաստէ Եւրոպային և Ամերիկային:

Այս հարցին պատասխանում են հետեւեալ թւական տեղեկութիւնները, որոնք առնաւծ են խորհրդային պաշտօնական հրատարակութիւններից:

### Քարածուխի արտադրութիւնը միլիոն տոննրով.

	1913թ.	1930թ.
Միացեալ Նահանգներ . . . . .	517	520
Անգլիա . . . . .	292	240
Գերմանիա . . . . .	175	160
Ֆրանսա . . . . .	44	54
Խարիդ. Միութիւն . . . . .	29	57

### Թուղի արտադրութիւնը միլիոն տոննրով.

Միացեալ Նահանգներ . . . . .	31,5	39,0
Անգլիա . . . . .	10,4	7,0
Գերմանիա . . . . .	10,9	12,0
Ֆրանսա . . . . .	9,0	10,0
Խարիդ. Միութիւն . . . . .	4,2	5,3

### Պողպատի արտադրութիւնը միլիոն տոննրով.

Միացեալ Նահանգներ . . . . .	30,8	48,0
Անգլիա . . . . .	7,8	8,8
Գերմանիա . . . . .	12,0	14,5
Ֆրանսա . . . . .	7,3	9,4
Խարիդ. Միութիւն . . . . .	4,2	6,0

\*) Այս յօլւածը ամփոփում է մի հատւած ռուս յայտնի սցիլայ-դիմոկրատ տնտեսագետ Ա. Խզովի վերքերա գերմաներէն ու ռուսերէն լեզուներով յոյս տեսած «Հնգամեակը» գրքից:

### Քարիւղի արտադրութիւնը միլիոն տոննրով.

Միացեալ Նահանգներ . . . . .	34,0	140,0
Մեքսիկո . . . . .	3,8	6,5
Վենեսուէլա . . . . .	—	23,0
Խարիդ. Միութիւն . . . . .	9,2	19,0

Եւ, վերջապէս, բամբակ արտադրած է հազար տոննրով.

	1913թ.	1928թ.
Միացեալ Նահանգներ . . . . .	5786	6770
Անգլիա . . . . .	4274	2904
Գերմանիա . . . . .	1600	1450
Ֆրանսա . . . . .	1300	1350
Խարիդ. Միութիւն . . . . .	2003	1939

Ի՞նչ են ցոյց տալիս այս թւերը:

Այն, որ իր տնտեսական վիճակով Խորհրդ. Միութիւնը ղեռ շատ ու շատ հեռու է Եւրոպայից ու Ամերիկայից — այնքան հեռու, որ խօսք անդամ չի կարող լինել հինգ տարում «հասնելու և անցնելու» մասին: Ըիրտ էր գրում Տրոցկին 1931 թւին, թէ՛ «իր արտադրական ուժերով Խորհրդ. Միութիւնը այսօր էլ ղեռ, իր հնդամեակի երրորդ տարում, անհամեմատ աւելի մօտ է ցարական Թուսաստանին, քան առաջաւոր դրամատիկական երկրներին»:

Եւ յիբուհ, այսօր էլ տակաւին երկրազորութեան մէջ գրաղւած է Միութեան ղործի ընդունակ ընակիւնների 80%ը, մինչ Ամերիկայում, 1920 թւին, գրաղւած էր 26,3%ը, իսկ Գերմանիայում 1925ին՝ 30,5 ազկասը: Ժողովրդական ընդհանուր եկամուտը շունչ ղլուխ 1929-30 թւին Խորհրդ. Միութեան մէջ հասնում էր 300 սակե մարկէ\*), Ամերիկայում 1928 թւին՝ 2228, Գերմանիայում նոյն տարի՝ 771, Ֆրանսայում՝ 716 և Անգլիայում՝ 1123 մարկի:

\*) Այս 300 մարկ գումարը՝ հաշուած է ղերվածեց բուրիլն ընդունելով հաւասար սակի բուրլու, միւնչդեռ փաստօրէն ղերվածեցը շատ աւելի պակաս արժէ, որով 300 մարկի իրական արժէքն էլ անուագն մի էանի անգամ պէտք է իջեցնել:

Նոյն յետամնացութիւնը տեսնում ենք և մերենա-  
յական ու կենդանական շարժիչ ուժի համեմատութիւ-  
նից: Եթէ ընդունենք Պորճրը. Միութեան ունեցած  
շարժիչ ուժը որպէս միասոր, Ֆրանսայինը կը լինի  
1,8, Անգլիայինը՝ 3,5, Գերմանիայինը՝ 5,4, Միաց-  
ցալ Նահանգներինը՝ 11,4:

Աւելի անմխիթիւր կը լինի պատկերը, եթէ համե-  
մատենք արտադրութեան հիմնական ճիւղերի արդիւն-  
քի բաժինը մէկ շնչի վրա: Այսպէս, Անգլիայում մի  
բնակչին հասնում է 5,035 քիլոգրամ քարածուխ,  
Ֆրանսայում՝ 1300, Բելգիայում՝ 3,560, Միացեալ  
Նահանգներում՝ 5,070, Գերմանիայում՝ 2,400, իսկ  
Պորճրը. Միութեան մէջ՝ 454:

Թուջ՝ Անգլիայում՝ 130, Ֆրանսայում՝ 230, Բել-  
գիայում՝ 485, Միացեալ Նահանգներում՝ 330, Գեր-  
մանիայում՝ 200, իսկ Պորճրը. Միութեան մէջ՝ 30,5:  
Պողպատ՝ Անգլիայում՝ 176, Ֆրանսայում՝ 210,  
Բելգիայում՝ 486, Միացեալ Նահանգներում՝ 402,  
Գերմանիայում՝ 240, իսկ Պորճրը. Միութեան մէջ՝  
40,6:

Երկտրական ուժ՝ Անգլիայում՝ 328 քիլոուատ-  
տամ, Ֆրանսայում՝ 336, Բելգիայում՝ 468, Միացեալ  
Նահանգներում՝ 860, Գերմանիայում՝ 400, իսկ Պոր-  
ճրդային Միութեան մէջ՝ 54:

Ամէն տեսակէտից, խորճրդային քաղաքացու պա-  
հանջներն անհամեմատ աւելի քիչ են բաւարարած,  
քան դրամատորական երկրներում: Անգլիայում եթէ հըն-  
գամեալ ծրագրերը կրպորածէր հարկերին հարիւր,  
դարձեալ դեռ շատ տարիներ պէտք պիտի ընէր, որ-  
պէսզի Պորճրը. Միութիւնը կարողանար հասնել Ամե-  
րիկային, Գերմանիային, Բելգիային կամ Անգլիային  
ու Ֆրանսային:

Հակառակ այսպիսի յետամնացութեան և աղքա-  
տութեան, խորճրդային իշխանութիւնը իր հպատակ-  
ներէ բերանից կտրում և ունեցածը արագօրէն արտա-  
հանում է արտասահմանի շուկաները: Իր ժողովուրդը  
այսրում է անօթի, իսկ 1929-30 թւին Վնէյտորգը  
( Արտաքին Առևտրի Վարչութիւնը ) արտահանեց  
2,268,000 տոն ճացահատիկ, մինչ նախորդ տարի ար-  
տահանւած էր միայն 98 ճագար տոն: Ամէն տարի ար-  
տահանւում է մեծ քանակութեամբ ուտելիք, ծխա-

խոտ, լուցկի, սալոն, շաքար, չիթիկ և ուրիշ տե-  
սակ ապրանքներ: Հետեւեալ երկու աղիւսակները յստակ  
զաղարկար են տալիս խորճրդային արտածման և նե-  
րածման մասին:

Արտածում միլիոն բուրժիներով.

	1928/29թ.	1929/30թ.
Փայտեղէն . . . . .	138	180
Քարիւղ . . . . .	132	157
Հացահատիկ . . . . .	15	121
Մորթեղէն . . . . .	109	83
Հիւսւածեղէն . . . . .	51	48
Կուսահատ . . . . .	40	48
Շաքար . . . . .	35	27
Քարածուխ . . . . .	10	17
Մանցանիւղ . . . . .	19	15
Հակիթ . . . . .	27	10
Պղ . . . . .	33	10
Երկաքարամս . . . . .	6	4

Ներածում միլիոն բուրժիներով

Համք, մետաղ և մետաղեղէն	294	583
Հիւսւածեղէն ու քեղեր . . . . .	256	161
Սննդեղէն . . . . .	72	93
Կենդանիներ և կենդանական մթերքներ . . . . .	70	54
Քիմիական ցիւքեր . . . . .	43	52
Թղթեղէն . . . . .	17	16
Շինարարական նիւթեր . . . . .	4	7

Այս բոլորից պարզ երևում է, որ արտածումն ու  
ներածումը հաւասարակուած չեն, որով խորճրդային  
իշխանութիւնը կամ պարտքերի տակ է ընկնում, և  
կամ ստիպւած է ունեցած ոսկու պահեստի որոշ մասը  
արտահանել և այդպիսով աւելի ևս կտորել չէրմոնէջի  
դնողական ուժը:

Ո՛ր երկրների հետ է առևտուր անում Պորճրը.  
Միութիւնը: Այս հարցին պատասխանում է հետեւեալ  
աղիւսակը:

Հեղաձեռնի առաջին երկու տարւոյ ընթացքին  
խորճրդային իշխանութեան արտաքին առևտուրը կրում  
էր այսպիսի պատկեր, միլիոն բուրժիներով.

Երկրներ	1928/29		1929/30	
	Արտածում	Ներածում	Արտածում	Ներածում
Մոնղոլիա	208,5	184,4	214,8	234,3
Միացեալ Նահանգներ	38,4	152,9	44,5	280,3
Գերմանիա	192,5	44,4	237,6	78,9
Անգլիա	74,0	63,7	62,2	47,3
Պարսկաստան	69,9	15,3	70,0	14,3
Լատվիա	43,1	30,4	44,7	32,2
Ֆրանսա	30,1	8,2	47,2	10,3
Իտալիա	26,2	1,8	34,4	3,8
Հոլանդիա	16,0	3,7	25,6	7,5
Բելգիա	12,9	16,4	14,8	34,8
Լեհաստան	14,1	7,2	16,8	16,2
Ճապոնիա	17,4	12,1	16,5	9,9
Թիւրքիա	9,9	19,3	16,4	15,2

Այսպիսով, առևտրական յարաբերութիւնների տե-  
սակաւից առաջին տեղը բռնում է Գերմանիան, երկ-  
րորդը Հերթին գալիս են Միացեալ Նահանգները: 1931  
թւից սկսած առևտրական յարաբերութիւնները խիստ  
կրճատեցին Ֆրանսային, Բելգիային և Գանադային հետ,  
զլխատարայէն, տըմփիմզի հարցի շուրջ ծագած բա-  
րամի հետևանքով: Խորճրդային իշխանութիւնն այս  
երկրները ողողեց աման ապրանքով, մանաւանդ փայ-  
տեղէնով, որ առավ բերեց բուռն դժգոհութիւն տեղա-

կան առևտրականների մէջ և պատճառ եղաւ համա-  
պատասխան արգելիչ քայլերի կառավարութիւնների  
կողմից:

- Արտածման և ներածման թւերի ուսումնասիրու-  
թիւնից երևում է, որ խորճրդային իշխանութիւնը  
մեծաքանակ զնոյ է ամերիկեան և գերմանական շու-  
կաներից և մեծաքանակ վաճառող անգլիական և դեր-  
մանական շուկաներում: Անգլիական հաշուկէիւրը կրա-  
ւորական է, մինչ գերմանականը մօտաւորապէս հա-

աարակչուում է: Անդրիան Ռուսաստանից ստանում է փայտեղէն, հացահատիկ և անդեղէն, որ, քի հարկէ, որը չափով հարած է հասցնում դոմինիոնների առևարին Անդրկայի հետ:

Քուրերի ուսումնասիրութիւնը անվիճելի է զարճնում և այն փաստը, որ Սորհրդ. Միութեան անտեսութեան

թէ արտադրական և թէ առևարի բնաշաւաններում, դրամատիրական երկրներէ շարքում, բռնում է ամենայնպէս տեղը: Այս պայմաններում Ամերիկային և Եւրոպային հասնելու և անցնելու՝ խօսքը մնում է անբովանդակ ու անխմտ մի խօսք:

## Ա Յ Ն Տ Ե Ղ Ի Ց

Այս նախակը գրած է Հայաստանից ոչ-հեռու ընկած հայաբնակ մի շրջանից: Հեղինակը մեզ ծանօթ է և ըստ անճայնի վատասելի:

«... Ամենքս էլ ողջ և առողջ ենք, բայց վա՛յ այսպիսի առողջութեան: Կեսանք հո չէ մեր քաշածը. անտանելի տառապանք է: Ժողովրդի 90 տոկոսը սոված է. կէս-կուշտ, կէս-քաղցած ենք ապրում: Գուցէ ձեզ անհաւատալի թեւայ, որովհետև հազիւ թէ ուրիշ որեւէ տեղ այսպիսի անտանելի դրութիւն գոյութիւն ունենայ:

Ի՞նչ ենք ուտում մենք: Կարծում էք մի տեսնո՞ւմ ենք. միւր վաղո՞ւց մեզ համար երազ է դարձել. դեռ նախնիներն էլ դժբաղութեամբ ենք ճարում: Այդ անպիտան դեռնամիտները, որի վրա չէինք նայում առաջ, այժմ ոսկու գին ունին. քիթով Չ թուրքիով») հազիւ է ճարում, այն էլ հարգար ու մի տես հերթի կանգնելով:

Բոլշևիկները իրենք առաւ-առաւ ուտում-խմում են, որը չափով լաւ են կերակրում և կարծիք բանակայինները, իսկ Ժողովուրդը անօթի է պահում:

Մեր բոլոր դիւղերը քար ու քանդ եղան: Մեր առաջաջ չէն ու հարուստ դիւղի հետքը չկայ: Եթէ այժմ տեսնեն, չեն ճանաչի՞ ախճա՞ն փոխել է. ամէն ինչ քար ու քանդ է եղել: Գիւղացիութեան աղքատութիւնն ու թլուառութիւնը աննկարագրելի է. Ժողովուրդը ստրկական սիճակի մէջ է:

Գիւղացիների մի մասին յայտարարեցին կուլակի, ձեռքերից ամէն բան առան և իրենց էլ տարան հիւսիսի նահանգները ծառ կորելու. մի մասին էլ բանտարկեցին և բանտերում են պահում՝ ճրի աշխատեցնելով: Մի որոշ մասն էլ քաղաք փակեց. քաղաքներում դոնէ բանտորութիւն կարելի է անել և օրական մէկ-երկու Փոլենտ հաց ստանալ: Գիւղում մնացածները եղի պէս բանեցում են, յետոյ ձեռքերից առնում է ամէն բան: Եթէ դիւղացին պահանջած չափով չկարողացաւ տալ, վերջին կողմն ու ոչխարը ծախում և պահանջը լրացնում են: Իսկ մէկ կողմ կամ մէկ ոչխար այժմ դիւղացու համար մեծ հարստութիւն է:

Գաղաքում միայն բանտրոններին տալիս են օրական երկու Փոլենտ հաց, իսկ մնացած ազգամակութեան՝ մէկ Փոլենտ: Սովից ու վատ կեանքից Ժողովրդի մէջ

շատ տարածւած է թոքախտը: Յաճախ պատահում են և ինքնասպանութիւններ: Վերջիններս մասին թերթերում ոչինչ չի գրում:

Գուք կը հարցնե՞ք՝ հապա ինչո՞ւ է համբերում Ժողովուրդը:— Վասի է սարսափի պատճառով: Կոմկուս և Գէպէու — ահա այն սյժը, որի վրա հիմնւած է այստեղի իշխանութիւնը: Ով որ ձեզ հաւատացնէ, թէ այստեղ բանտրական կամ դիւղացիական իշխանութիւն կայ. — թէք երեսին: Դրանք խաբարաներ են, կամ կալաւաւաններ, և կամ, աւելի վատ, խաբած ու մոլորւած ճարտիկ:

Անցեալները պատահարայ այստեղ ընկան Ամերիկայի «Հ. Կոչնակ» թերթի և Փարիզի հօկճի թերթի մէկ քանի համարները: «Հ. Կոչնակ»ի մէջ թլուառականի մէկը, խիղճը սակարկութեան դրած, փրփուրը բերին փառաբանում է «ճոր հայրենիքը», ասում է, թէ այն հայր Հայ չէ որ չի տեսի խորհրդային հայրենիքը: Ի՞նչ ասես այդպիսի մարդուն: Անուշտ, եթէ վաճառւած չէ, ճամբորդել է իրրեւ թուրքստ, լաւ հիւրասիրել ու խնամել է, տեսել է ինչ որ ցոյց են տակ և ելել այդպիսի հէքստիներ գրում: Այդպիսի այցելուներ այժմ շատ են գալիս մեր երկիրը: Բայց եթէ այդ «աղանախներ» մի քանի ամիս թողնէք իր ճակատագրին, դրանք դուրսնէր չունենար, ապրէր մեզ պէս չվաւած սննդանիւնքում, օրերով հերթի կանգնէր մի Փոլենտ ասումս դեռնամիտներ կամ մի քանի հասած սելեոդկա (աղի ձուկ) ստանալու համար, կամ եթէ ճաշէր բանտարկան ճաշարան կողւած խոզանոցներում, — այն Ժամանակ կիտանար թէ ինչ տակ է «խորհրդային Հայրենիք» ու դիւտեց դուրս էք տար այնպիսի յիմարութիւններ, ինչպիսիք գրել է Նիւ-Եորքի թերթի մէջ: Հեշտ է Ամերիկայից «խորհրդային հայրենիք»ի զովքը երբէլ. քաղ են՝ թող դան մեզ հետ ապրեն...»

Մէկ խօսքով՝ երանի՜ նրանց ովքեր չեն տեսնում այս գղճիկ կարգերը: Ի՞նչ պիտի լինի մեր վերջը, ի՞նչ պիտի լինի մեր դաւակնների ապագան — սարսափելի է մտածել: Աչքերս յաւած դէպի Արեւելք՝ անհամբեր «բան»ի ենք սպասում: Պիտի դա՞յ այդ փրկարար «բան»ը: Եթէ մի բան լինի, այդտեղից պիտի լինի: Հակառակ դէպքում կորած ենք: Ուղքով-զիւտով կորած ենք»:

\*) 16 ֆրանկ. ԽՄԲ.

## « Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի ն ո թ ր Խ ա ս ց Է ի

ԱՅՍՈՒՀԵՏԵԻ « Դ Ր Օ Շ Ա Կ » - ԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ, ԳՐՈՒԹԻՒՆ, ԳԻՐՔ, ԹԵՐԹ, ԴՐԱՄ ԵՒ ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՔՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՍԵՒՈԿ.

Rédaction „DROSCHAK“ 71, ave. Kléber  
PARIS (XVI) France

### Ֆ Ի Լ Ի Պ Պ Օ      Տ Ո Ւ Ր Ա Տ Տ Ի

Մարտ 29ի դիւնըր Փարիզի մէջ մեռաւ Ֆիլիպպո Տուրատտի, Իտալիոյ ընկերվարական կուսակցութեան ծերունի և աքտորական հիմնադիրը, որ աշխատաւորութեան դատին համար կուսած է մինչև իր վերջին շունչը:

Աշխատաւորական Փարիզը դիտցաւ արժանավայել շուքով մը հողին յանձնել անոր աճիւնը, Ապրիլ 2ին: Տաւր-տանանըհից հազար աշխատաւորներու բազմութիւն մը կը հետևէր իր դազողին, դէպի Փէռ Լաշգի գերեզմանատունը, ուր դամբանակահներ խօսեցան ընկերվարական-աշխատաւորական Միջազգայինի ակա-նաւոր դէմքերը: Պատիրակներ կկած էին Եւրոպայի դիտաւոր երկիրներէն և Բ. Ա. Միջազգայինի կեդրո-նէն: Իր բաղձանքին համաձայն, Տուրատտի մարմինը հրկիզեցաւ գերեզմանատան մէջ:

Ֆիլիպպո Տուրատտի ծնած էր 1857ին: Նախնական կրթութիւնէն յետոյ, մտաւ Պոլոնիոյ համալսարանը, ուր մասնաւորապէս աչքի կը զարնէր իր սուր հետա-քրքրութիւնը ընկերային հարցերու մասին: Կեանքը պատմութիւնէ և Իտալիոյ ընկերվարական շարժման և իրադրական դաս մը՝ երիտասարդութեան համար: 1882ին հիմնեց ընկերվարական հանդէս մը, «Լա Կրի-տիկա Սոցիալէ» եւ տիրաբար վարեց զայն մինչև 1926, դանդաձանքը մարդելով ընկերվարութեան շնորհին մէջ: 1891ին, արդէն իսկ ծանօթ էր իբրև մէկը Իտալիոյ ընկերվարութեան հիմնադիրներէն, և իբրև այդ մաս-նակցեցաւ Պրիւսիլի համագումարին:

Կրիսպիի բռնակալութեան շրջանին, երբ լուծե-ցաւ Իտալիոյ ընկերվարական կուսակցութիւնը, Տու-րատտին ալ բանտարկութեան դատապարտեցաւ: Բայց, շարժումը ծաւալած էր արդէն, և դատապար-տեալը երեսփոխան ընտրեցաւ Միլանէն, 1895ին: Մի-սակեական կառավարութիւնը այլ ևս չէր կրնար խա-

փանել յարաճուն հոսանքը: Ընկերվարական կուսակ-ցութիւնը հռչակեցաւ օրինական կազմակերպութիւն, և նոր թափ ստացաւ Տուրատտի շունչին տակ:

1899ին, յետաշրջական շարժումը նորէն զլուխ ցցեց և Տուրատտի դատապարտեցաւ 12 տարի բերդարգե-լութեան: Բայց նորէն երեսփոխան ընտրեցաւ (1900), և Երեսփ. Փողովը ընդհանուր ներում հռչակած ըլլա-լով, ընկերվարական շարժումը անարգել յառաջիմեց մինչև 1911: Նախապէս թունդ մարքսեան, կեանքի հետ շփուլով դարձած էր բարեշրջական. բայց կը մնար անհաշտ սկզբունքի խնդիրներու մէջ: Ինչպէս 1911ին (Ափրիկեան Տրիպոլիոյ պատերազմ): 1914ին ալ մինչև վերջը ընդդէմացաւ Իտալիոյ պատերազմի մասնակցու-թեան:

Մեծ Պատերազմէն յետոյ, բայց մանաւանդ սեւ շապիկաւորներու յաղթանակէն յետոյ, Տուրատտի շա-րունակեց մարտնչել աշխատաւորութեան դատին հա-մար, մինչև որ Մոսկովինի անտաննի զարձուց իր, ինչպէս ուրիշ բազմաթիւ դէմքերու ոչ միայն գործու-նէութիւնը, այլ և կեանքը: Իտալազօրէն սպանած էր իր աշակերտը, Մատտիոտի: Ձնջած էին սահմանա-դրական կարգերը: Երեսփ. Փողովը այլ ևս չէր կրնար շնչել: Եւ առտու մը, Տուրատտի առաւ քալեց ուրիշ ընդդիմադիրներու հետ, իբրև բողոքի ցոյց: Բայց անողք էր Աշխատութեան թաթը, և աննկուն ընկեր-վարական աքտորեցաւ 1926ին: Կեանքը վտանգի տակ էր արդէն, և քանի մը ընկերներու հետ, յաջողեցաւ փախչել Խաւսկով մը և ապաստանել Փարիզ, ուր մնաց մինչև մահը:

Անվեհեր մարտնչող և ամուր կամեցողութեան տէր, ողբացեալ ընկերը միևնոյն ատեն մարմնացումն էր զազդափարականութեան: Կատէր ո՛րեէ բռնութիւն, նոյն իսկ զպրոկտորիտաթի անտեսով, և կը հաւատար ընկերվարութեան անվրէպ յաղթանակին:

### Բ Ո Վ Ա Ն Ե Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատերազմի խնդիրը (Սմազդրական) . . . . .	73	Թարբիոյ շուրջ . . . . .	90
Գաղապար Յակոբեանի (Ա. Ա.) . . . . .	75	Հնգամեակը եւ համաշխարհային տնտեսու- թիւնը . . . . .	93
Ջակֆէդէրացիայի Տասնամեակը (Ս. Վրացեան) . . . . .	78	Այնտեղից . . . . .	95
Այսօրան Գերմանիան (Ա. Արեղեան) . . . . .	82	Ֆիլիպպո Տուրատտի . . . . .	96
Կարմիր գծից ներս . . . . .	86		

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի  
Թիւն արժէ 2 ֆր. 50 սանս.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէ՛՛  
Rédaction « D R O S C H A K »  
71, ave. Kléber. PARIS (16°)